

ԱՆՈՒՇԱԿԱՆ ՎԱՐԳԱՆՅԱՆ  
ԲԱՆՎՈՐ

---

ԳՈՐԾԱԴՈՒԼ

Կ Ա Մ

ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԶՈՋԵՐ

Դրամա 3 գործ.

1905 թ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ


---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.— ՅԵՐԵՎԱՆ 1928

150

№ 2 ԳՆԱԳՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ № 2

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԲԱՆՎՈՐ



A II  
38902

~~ԳՈՐԾԱԴՈՒԼ~~

Կ Յ Մ

ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԶՈՂԵՐ

ԴՐԱՄԱ Ց ԳՈՐԾ.

1905 թ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ



Սույն պիեսան գրված է  
1905 թ. և առաջին անգամ  
բեմադրվել է 1912 թվին Թիֆ-  
լիսում արտիստական բեմի  
վրա դերասան Արմենյանի դե-  
կավարութլամբ:



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- |                                 |  |
|---------------------------------|--|
| 1. Գեղորգ Բաղդասիյ . . . . .    | Գործարանատեր                           |
| 2. Մազբաղ . . . . .             | Մրա կինը                               |
| 3. Սիրաճուգ . . . . .           | Մրանց աղջիկը                           |
| 4. Վահան . . . . .              | Գործարանի բժիշկ                        |
| 5. Սեփան . . . . .              | Գործարանի կառավարիչ                    |
| 6. Գիգուի . . . . .             | Պանդուկապետ                            |
| 7. Արեակ . . . . .              | } Գեղորգ Բաղդասիյի գործարանի անդամները |
| 8. Գարեգին . . . . .            |  |
| 9. Գրիգոր . . . . .             |  |
| 10. Սիմոն . . . . .             |  |
| 11. Շաֆրո . . . . .             |  |
| 12. Աբրահամ . . . . .           |  |
| 13. Սահակ . . . . .             |  |
| 14. Կարսա բերդ բանվոր . . . . . | } Պանդուկի ծառան                       |
| 15. Խալի բերդ բանվոր . . . . .  |  |
| 16. Արտ . . . . .               | } Գեղորգ Բաղդասիյի տան ծառան           |
| 17. Մարգար . . . . .            |  |
| 18. Լեւիթնազ . . . . .          |  |
| 19. Թարոս . . . . .             | } աղախինը                              |
| 20. Մարոս . . . . .             |  |
| 21. Խեչո . . . . .              | } Ուրիշ գործարանի բանվորներ            |
| 22. I II III բանվորուհիներ      |  |
| 23. Դոնապահ. Քաղաքապահ          |  |

## I ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ.

Ինձը ներկայացնում ե ծխախոտի գործարան՝ աշխատանքից առաջ: Այլ ու ձախ դրված են դադդյաններ և նստարաններ: Դադդյանների վրա թուփուն, գիլզի դատարկ և լցրած տուփեր՝ լուրաքանչուր բանվորի առաջ պաշկաներով դրված: Գիլզու ծայրերը կտրոզ մկրատ. թուփուն, կշռելու համար կշռոք. միքանի ուրիշ գործիքներ և այլ պարագաներ: Յերկու դուռ, մեկը մուտքն է և տանում է դեպի ներսի մյուս բոլոր բաժանմունքները, իսկ մյուսը տանում է դեպի գործարանի գրասենյակը:

Բանվորներն աշխատանքի ժամանակ հագնում են կապույտ կամ սպիտակ խալաթներ: Բանվորները լերկու սեռից:

## Տ Ե Ս Ի Լ 1.

ԳԵՎՈՐԳ, ՄՏԵՓԱՆ ԵՅՎ ԱԲՐԱՀԱՄ.

(Գրասեփյակից յերեւոյ ճեռս եմ մտնում: Աբրահամը սաստիկ հիվանդ է. հազիվ է վոսփի վրա կանգնում):

ԱԲՐ.— Խաղելին, մի յերկու ուրլին ձեզ համար մեծ գումար չի:

ԳԵՎՈՐԳ.— Դու ստիպում ես ինձ կրկնել սասածներս. լես քեզ ասացի, վոր չեմ տա: Հետեապես կանգնելը դուր ե:

ԱԲՐ.— Խաղելին. ախր հիվանդ մեռնում եմ: Հազը ինձ սպանում ա: Վոտքի վրա կանգնել չեմ կարողանում: Յերկու ուրլին ձեզ համար ի՞նչ մեծ փող ա...

ԳԵՎՈՐԳ.— Վոչ մի գրոշ: Իմ կամքս այդպես է. ինձ ստիպել, հանդիմանել դուք իրավունք չունեք: Ահա, տեսնում ես, եղ կանոնադրութեան մեջ վորոշված են թե իմ և թե ձեր պարտականութիւնները: Իսկ յեթե այդտեղ կա մի կետ, վորի հետ դուք համաձայն չեք, եղ դեպքում կարող եք թողնել գործարանս և հեռանալ: Անգործ բանվորներ շատ, ամեն որ գլուխս տանում են իրենց դիմումներով:

ՄՏԵՓ.— Անցյալ որը տասը հոգի նորից լեկել խնդրում ելին, լես չընդունեցի:

ԳԵՎՈՐԳ.— Լսում ես: Աշխատանք փնտոող բանվորները գիտե՞ս, թե վորքան շատ են: Ի՞նչ միտք՝ հիվանդ բանվորներին պահել, իսկ առողջներին մերժել: Յեթե մի ուրիշ ավելի խելոք գործարանատեր լիներ իմ տեղը, հիվանդ և աշխատանքի անընդունակ բանվորներին բոլորին կհեռացներ և նրանց փոխարեն նոր և թարմ ուժի տեր բանվորներ կընդուներ: Բայց տեսնում ես՝ լես եղ չեմ անում: Իսկ յեթե դուք ձեր ամենորջա դիմումներով և անտեղի պահանջներով ինձ կձանձրացնեք, լես ել նույնը կանեմ:

ԱԲՐ.— Խաղելին, բացի հիվանդ լինելս՝ տանը հազար ու մի կարիք ունեմ, մեղք եմ, խղճացեք:

ԳԵՎՈՐԳ.— Ուրեմն լես մեղք չեմ. ձեր կարծիքով լես կարիքներ չունեմ: Բժիշկ պահանջեցիք, տվի. աշխատանքի ժամերը կըճատեցի, ուժիկներդ ավելացրի. ուրիշ ել ի՞նչ եք ուզում: Ամիսը չլրացած նոր պահանջ կներկայացնեն. կարծես մեծ աշխատանքի վրա լենք: Վոչ, սիրելիս. ախորժակներդ չափավորեք. ձեր խաղելիներին համար դուք վոսկու ամբարներ չեք լքցնում, վոր եղպես պահանջում եք: Ի՞նչ կասես, Ստեփան:

ՄՏԵՓԱՆ.—Ճշմարիտ խոսքի դեմ ի՞նչ կարող եմ ասել: Ի՞նչ վոր պահանջել են, այն ել ստացել են: Ձեր բարեսրտութիւննից, կարծում եմ, վոր նրանք գո՛հ պիտի լինեն: Ձեր փոխարեն լեթե մի ուրիշը լիներ, սրանց հետ բոլորովին այլ կերպ կ'լարվեր: Դուք միշտ համբերող եք և զիջող:

ԱԲՐ.—Լավ եք ասում, պարոն Ստեփան. ուրազի նման միշտ ձեր կողմն եք տաշում: Ախր քիչ ել մեզ համար մտածեցեք, մեր դրութեան մեջ մտեք, մեր հալն ել հարցրեք ե... մի սլուրուք լուլֆաթ շլինքս ե ընկած, մի լերկու շահի փող եմ ստանում, եղ ել վոր դեղի տամ, լես խմեմ, բա նրանց ի՞նչ շուղաբ տամ: Նրանք ուտել չեն ուզում, ապրել չեն ուզում...

ԳԵՎՈՐԳ.—Եղ իմ դործը չե, լես պարտավոր չեմ ձեր ընտանիքի հոգսն ել քաշելու: Աշխատում եք, ձեր վարձն ել ստանում եք: Ձեր պահանջը լեթե արդարացի և որինական լիներ, լես կարծում եմ, վոր եղ կանոնադրութեան մեջ գրված պիտի լիներ:

ԱԲՐ.—Խաղելին, արդարացի և որինական շատ պահանջներ կան, վոր եղ կանոնադրութեան մեջ նուէնպես չեն հիշված... Յես իմ կարճ խելքովս իմանում եմ, վոր հիվանդ բանվորին լեթե դեղի փողը չպետք ա տրվի, բժիշկն ել գուր ա: Իսկ լեթե բժիշկը տալիս եք, որենքով դեղի փողն ել պետք ա տաք:

ԳԵՎՈՐԳ.—Լսում ես, Ստեփան: Բանվորս ինձ հետ որենքով ե խոսում: Ձե, ինչպես տեսնում եմ, դասդ լավ ես սովորել: Անիրաւ...

ՄՏԵՓԱՆ.—Իսկապես վոր անիրավութիւնն են անում: Բանվորին դեղ և բժիշկ տալ ախր մի ե լսել, մի ե իմացել:

ԳԵՎՈՐԳ.—Կամ թե չե, դեղը նրանք խմեն, փողը լես տամ. սա ի՞նչ միտք ե, չեմ հասկանում:

ՄՏԵՓԱՆ.—Այդ դեպքում, Գևորգ Բաղդանիչ, դուք ստիպված կ'լինեք ձեր վողջ կարողութիւնը բանվորներին բաժանել:

ԳԵՎՈՐԳ.—Բանվորներին բաժանելու լես կարողութիւնն չունեմ: Այդ տեսակ հիմարութիւնն նրանք իմ կողմից չեն տեսնի: Դե, ի՞նչ ես չորացած փայտի նման ցցվել առաջս: Կորի, աշքիցս հեռացիր:

ՄՏԵՓԱՆ.—Ինչո՞ւ լես զուր տեղը արլունը պղտորում: Դեզ վոր ասում են, գնա. պիտի իսկուէն գնաս:

ԱԲՐԱՀԱՄ.—Կգնամ, բա հո եստեղ չեմ մնալու:

(Ս.խ բառերով ու գլուխը օտրժելով գնում ե):

## Տ Ե Մ Ի Լ 2.

### Գ Ե Վ Ո Ր Գ, Ս Տ Ե Փ Ա Ն Յ Ե Վ Ս Ի Մ Ո Ն.

Գ Ե Վ Ո Ր Գ.—Սիւմոն, դեռ գործը չսկսած՝ դու լեկել և ուզում ես աշխատել:

Ս Ի Մ Ո Ն.—Առաջին անգամը չի, խաղելին, լես միշտ ել վաղ եմ դալիս. ամեն ուր սվխատուկից մի սհաթ առաջ լես հատուկ կանգնած իմ գործիս եմ: Պարոն Ստեփանը թող վկայի:

(Ստեփանը գլխով դրական նշան է անում):

Գ Ե Վ Ո Ր Գ.—Իսկ ի՞նչպես ե, վոր ընկերներդ թուլլ են տալիս և վոչինչ չեն ասում:

Ս Ի Մ Ո Ն.—Ի՞նչ նրանց գործն ա: Քան թե մի սհաթ սվխտի քուչումը կանգնեմ, սրա-նրա հետ դավազութլուն անեմ, ավելի լավ չի, վոր դամ բանեմ, գործս առաջ գցեմ:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ստեփան, ահա թե ինչու իմ հին բանվորները ինձ մոտ միշտ պատվով են լեղած: Աշխատասեր և ազնիվ բանվորներին լես միշտ սիրել և հարգել եմ. բայց ինչպես տեսնում եմ, նախանձ ու չար մարդիկ ամեն կերպ աշխատում են իմ ու սրանց մեջ լերկպառակութլուն գցել և սրանց իմ դեմ լարել:

Ս Տ Ե Փ Ա Ն.—Սիւմոն, բժշկի մասին ե ասում:

Ս Ի Մ Ո Ն.—Գիտեմ. հասկանում եմ: Նա նոր չի ուզում եղ անել: Նա լեկած որվանից, իր քաղցր լեզվով, իր ջուռաբեջուռա խոսքերով ու մասլաթներով բանվորներին իր կողմն ա գրավել: Վոր իմանաք՝ նա ի՞նչ լեզու ունի. ո՞. պմ.-պմ.-պմ. շահմար ոձին իր բնից կհանի: Ժողովներին տենաք վճնց ա խոսում, կմնաք դարմացած:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Ուրեմն, բժիշկը ժողովներ ել ե անձում:

Ս Ի Մ Ո Ն.—Ինչպես չե. մեր բանվորները միշտ գնում են. մի անգամ ել լես գնացի, չե՛. չե՛, չե՛, լես չգնացի... (Մի կողմ) քիչ եր մեռում հա...

Ս Տ Ե Փ Ա Ն.—Գևորգ Բաղդանիչ, ասածներս կարծեմ լենթադրութլուն չեր:

Գ Ե Վ Ո Ր Գ.—Այո, Ստեփան: Ինձ համար այժմ ամեն ինչ պարզ ե: Լսիր, Սիւմոն, դու ասացիր, վոր նրանց ժողովներում լեղիլ ես:

Ս Ի Մ Ո Ն.—Ձե, խաղելին, աստոժ, լերկիք, նրանց ժողովներին լես չեմ գնացել: (Մի կողմ) Իմ լեզվով վճնց կրակի մեջ ընկա:



Գեւոր՝Գ.—Գիտեմ, դու հակառակվում ելիր և չեյիր ուզում գնալ, բայց ընկերներդ քեզ խաբեցին և զոռով տարան: Դրա համար դու չկարճես, թե քեզ վրա նեղանում եմ. լես միայն ուզում եմ իմանալ՝ ժողովներում բժիշկը ձեզ հետ ինչի՞ մասին ե խոսում:

ՍԻՄՈՆ.—Ձեռ գիդա, խաղեցին. նա ուրիշ ել ինչի՞ մասին կխոսա. դիմ մեր ու ձեր մասին ա խոսում:

Գեւոր՝Գ.—Իմ մասի՛ն. թե ի՞նչ. վոր լես ձեզ հարստահարում եմ, ձեզ շահագործում եմ, առավոտից մինչև լերեկո՞ ձեզ տանջում-չարչարում եմ, և դուք. տղետ ու անկազմակերպ բանվորներդ. տրտունջն ու բողոքը ձեր սրտում, ստիպված եք խոնարհվել իմ առաջ, իմ ստրուկը, իմ գերին, իմ ճորսը լինե՛լ:

ՍԻՄՈՆ.—Պաղեցին, ընենց տեղին խոսում եք, կասես դուք ել ժողովումն եք ըլել, նրա խոսքերն եք լսել: Եղ ի՞նչ վոր դուք ասեցիք, եղ բոլորը բանվորներին առել ու հավատացրել ա: Նա նրանց ամեն ժամանակ հեղափոխական քարոզներ ա կարդում և ինչ-վոր մի մեծ կովի համար պատրաստում:

Գեւոր՝Գ.—Լսում ես, Ստեփան. չպետք ե հետաձգել, հարկավոր ե նրան գործարանից անմիջապես հեռացնել: Քանի դեռ ուշ չե. քանի դեռ բանվորները բոլորը չեն վարակվել:

ՍԻՄՈՆ.—Ուշ ա, խաղեցին, նրան հեռացնելով բան չի դառնա: Մեր բանվորների մեջ ընենց տղելք կան, վոր բժշկից վոչընչով պակաս չեն:

ՍՏԵՓԱՆ.—Գրիգորի և Արշակի մասին ես ասում:

ՍԻՄՈՆ.—Հա, հենց դրանք են վոր կան: Դուք դրանց լավ չեք ճանաչում: Նրանց են երկեն մազերի տակը տասը հազար սատանաներ կան նստած: Գիտե՞ք, թե քանի զավոդի տղերք են գժվացրել ու զաբաստովկա անել տվել: Ամեն տեղ հո բժիշկն ինքը չի գնում. շատ անգամ դրանց ա զրկում: Դրանք վոր կան, Եղիստոնի փոնոգրափ են. բժիշկը իր իմացածը լցրել ա մեջներն ու դրել հատեղ: Ի՞նքը վոր որեսի դենը չըլնի լել, նրա ձենը, նրա խոսքերը մենք հատեղ ամեն որ լսում ենք:

Գեւոր՝Գ.—Նրանց ձենը լես ենպես կկտրեմ, վոր դուք հավիտյան չլսեք: Ստեփան, նրանց ազգանունները կզրես և կտաս. ինձ: Իսկ դու, Սիմոն, սրանից հետո գործդ բոլորովին կթողնես. և նրանց վրա ուշադրութուն կղարձես: Կհետևես նրանց ամեն մի քայլափոխում: Ո՞ւր են գնում, ո՞ւմ հետ են տեսնվում, նրանց հետ ի՞նչ են խոսում, ի՞նչ են մտածում: Ժողովները լե՛րը կամ վճրտեղ են նշանակում: Մի խոսքով՝ եղ բոլորը իմացիր և իմա-

ցածդ արի ժամանակին ինձ հայտնիր: Դրա համար դու ինձնից լավ վարձատրութիւն կստանաս: Հավատարիմ մարդկանց չես գնահատել գիտեմ: Վերջաւն ոտճիկ ես ստանում:

ՍԻՄՈՆ.— Որը ութանասուն կոպեկ:

ԳԵՎՈՐԳ.— Սրանից հետո դու կստանաս որը մի ուրբլի չերեսուն կոպեկ, միայն թե իսկութիամբ և ճշտութիւամբ կատարես քեզ վրա դրված պարտականութիւնը: Հը, ի՞նչ պատահեց: Ի՞նչո՞ւ եդպես խորը մտածմունքի մեջ ընկար: Յերեկ դժվարանում ես: Քո կամքն է. չես քեզ չեմ ստիպում: Յես միայն ցավում եմ, վոր չերկար տարիներ ինձ մոտ հավատարիմ աշխատելուց հետո այսոր պիտի թողնես գործարանս ու հեռանաս:

ՍԻՄՈՆ.— Պազելին, չես հեռանում. ինչի՞, չես ձեզ ի՞նչ եմ արել: Բա չես վոր եստեղից հեռանամ, տձենս, ընտանիքս, երեխեքս...

ԳԵՎՈՐԳ.— Դա արդեն քո գործն է: Նրանց համար դու պետք է մտածես. նրանց հոգսը դու պետք է քաշես: Իմ գործարանում դու կաշխատես թե՛ մի ուրիշը, ինձ համար դա միևնույն է:

ՍԻՄՈՆ.— Պազելին, ախր...

ԳԵՎՈՐԳ.— Առանց ախրի-մախրի պատասխանիր. չերկար մտածելու կարիք չկա: Ասա՛ դու ուզում ես գնալ, ընկնել փողոցները, ամիսներով դուրսը անգործ թափառել, ընտանիքդ, չերեխաներդ մատնել սո՞վի, զրկանքի՞, թե ալելի լավ է, վոր մնաս ինձ մոտ, աշխատես, լավ ոտճիկ ստանաս, տունդ, ընտանիքդ, չերեխաներդ ապահովես... քո առաջ դրվում է չերկու ճանապարհ. ընտրիր՝ վորը կամենաս: Յերկուսից մեկը՝ գնալ, թե մնալ...

(Սիմոնը յերկար մտածելուց հետո)

ՍԻՄՈՆ.— Մնալ, խազելին, մնալ...

(Գնում է տեղը կանգնում յե՛վ աշխատում):

ՍՏԵՓԱՆ.— Յես այդպես էլ չենթադրում ելի:

ԳԵՎՈՐԳ.— Ուրիշ կերպ լինել չեր կարող:

(Գործարանի գործի հրավիրող օչակը փնում է. բանվորներն ու բանվորուհիները ներս են գալիս. նրանցից մի մասը անցնում է մյուս բաժանունները, իսկ մյուս մասը մնում է բեմի վրա յե՛վ սկսում է գազգահների մոտ կանգնել յե՛վ աշխատել: Գիլգի յե՛ն լցնում, ծայրերը կտրում, տուփերի մեջ դարձում, կտեռով քուրուկ կտրում յե՛վ այլն):

### Տ Ե Ս Ի Լ 3.

ՆՈՒՅՆՔ, ԳԱՐԵԳԻՆ, ԱՐՇԱԿ, ՇԱՔՐՈ, ՈՒՐԻՇ ԲԱՆՎՈՐ  
ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒՀԻ ՅԵՎ ՀԵՏՈ ԳՐԻԳՈՐ.

(Շաբոն, Սիմոն, Սահակը մի Եարեւմ յիվ մի-  
յիվնույն զագոյաիի վրա յնն աօխասոււմ, իսկ Ար-  
Շակը, Գարեգիցը յիվ Գրիգորը մյուս զագոյաիի վրա:  
Գրիգորը ճեւս մանելիս «Մարտելոզ» Ե Եվկացնոււմ):

ՄՏԵՓԱՆ.—Ի՛նչ ես շվկացնում. փողոցումը չես. հազար  
անգամ ասել եմ՝ ներս մտնելիս ձեզ որինավոր և հանգիստ  
պահեք:

ԳԵՎՈՐԳ.—Ասածդ յերբ չեն հասկանում, տուգանքը նրանց  
հասկացնել կտա:

ԳՐԻԳՈՐ.—Վոտքներս դեռ ներս չդրած՝ աչքներին արդեն  
ծուռ յերևացինք:

ԳԵՎՈՐԳ.—Դե բավական ե, դու խոսելու համար չես յե-  
կել: Ստեփան, լավ հսկիր: Յեթի թույլ տվիր, նրանք ամբողջ որը  
կխոսեն, հեքիաթներ կպատմեն. հաշիվներին ուշադրութիւն դար-  
ձըրու. տես՝ թիվ ի՛նչ ե ստանում և վորքան գործ շինում: Են  
դեպքում, յերբ մեկի աշխատանքը իր ստացածով չբազմապատ-  
կըվեց, դժւրս, դժւրս շարտել: Ծույլ և շատախոս բանվորներ ինձ  
հարկավոր չեն:

(Ստեփանի հետ զնոււմ Ե մյուս բաժանոււմը):

### Տ Ե Ս Ի Լ 4.

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳԵՎՈՐԳԻ, ՄՏԵՓԱՆԻ.

ԳՐԻԳՈՐ.—Վոտներս դեռ ներս չդրած՝ սկսում են վրաներս  
խոսալ: Յերկու բոպե վոր ուշանում ենք, շարաֆ են գրում. մի  
բոպե պարապ վոր մնում ենք, ձեռաց նկատողութիւն են անում,  
իսկ իրանք վոր տարին տասներկու ամիս վոչինչ չեն շինում,  
ամբողջ որը պարապ-սարապ, ձեռները քամակներին դրած՝ իրանց  
համար արխային ման են գալիս, վոչինչ. դա աչքներին չի գա-  
լիս. դրա համար նրանց վրա խոսող, նրանց նկատողութիւն ա-  
նող չկա...

ՇԱՔՐՈ.—Եղ եր պակաս, վոր դուրս գաք, նրանց վրա խոսաք:

ՍԻՄՈՆ.—Դրանց վրա թիվ պտի խոսա, դժւ թե յես:

ՇԱՔՐՈՒ.— Խաղելինի դեմ խոսալու ճիշտ իրավունք ունի. նրանց կամքին հակառակվել ճիշտ համարձակվի: Դա միթե կարելի բան ա: Գործարանի տերն ու տիրակա՛նը նրանք են. որենքն ու իրավունքը նրանց ձեռքին ա:

ԱՐՇԱԿ.— Եղ որենքներով ու իրավունքներովն ա, վոր նրանք մեզ խաբում են ու ճնշում... Եղ որենքներով ու իրավունքներովն ա, վոր նրանք մեզ թալանում են ու զրկում... Եղ որենքներով ու իրավունքներովն ա, վոր նրանք մեզ տանջում են ու ստրկացնում... Դրանցով ա, վոր նրանք մեր արյունը ծծում, մեր միտքն ու հոգին թունավորում են:

ԳՐԻԳՈՐ.— Եղ տանջող ու ճնշող որենքներն ու իրավունքներն ա, վոր նրանց ձեռքից մենք պիտի խլինք. եղ ստրկացնող ու շահագործող որենքներն ու իրավունքներն ա, վոր մենք պիտի վոչնչացնենք... Բավական է, վորքան մենք համբերեցինք: Բավական է, վորքան մենք լռեցինք...

ՍԻՄՈՆ.— Փո՛նոգրափ, կատարյալ փո՛նոգրափ... Բժիշկը սարքել ա ու դրել եստեղ... Հարցնելը ամոթ չըլնի, ես որենքները դուք վոր չեք հավանում, ձեր հավանած որենքները եղ վճիռն ա, վոր մենք չենք տեսնում:

ՇԱՔՐՈՒ.— Կա՛մ, վոր տեսնաս...

ԳՐԻԳՈՐ.— Յեթե եսոր չկա, եղ չի նշանակում, վոր վաղը մյուս որը չի լինելու: Բանվոր դատակարարը իր որենքները ինքը կստեղծի:

ՇԱՔՐՈՒ.— Յես զարմանում եմ, լանի ես աշխարհում ձեզնից խելոք ել մարդ չկամ. ես որենքները թնչի ամենքի համար լավ ա, իսկ ձեզ համար փիս: Կամ թե չե, ես որենքներն ու իրավունքները վոր եղքան փիս ըլեր, ինչքան դուք եք կարծում, ձեզնից խելոք մարդիկ հմի վաղուց եղ որենքները փոխելու մասին մտածած ու մի բան արած կըլնեին...

ԳՐԻԳՈՐ.— Շատերն են մտածել և մտածողներից շատերն են գնդակահարվել, շատերն են բանտերում ու աքսորներում տանջվել ու նահատակվել...

ՍԻՄՈՆ.— Դաստիսոսութուններդ վերջացրի՛ք:

ԳՐԻԳՈՐ.— Դեռ չենք վերջացրել:

ՍԻՄՈՆ.— Դե, վոր չեք վերջացրել, շարունակեք. միթո՛ւմ եֆինջյանի թուրքունի ֆարբիկայում բանվորների առաջ կանգնած ճառ ես խոսում: Ճառախոսները կարծեմ ըսենց են սկսում. «Ընկերներ, Ռուսաստանի բռնակալ կառավարութունը ինչպես

մի ծանր ու ճնշիչ լուծ ընկած է մեր վզին, և նրա ծանրութիւն տակ տնքում ենք մենք բոլորս անխտիր... Մենք աշխատավոր ու բանավոր դասակարգս մեր այս ջլուտ բազուկներով հոշակապ պալատներ ենք կառուցում մեր արլունը ծծող տղրուկների ու վամպիրի համար; մինչդեռ մենք հալածվածներս ու մոռացվածներս ընկած մութ ու խոնավ նկուղներում՝ ցամաք հացի կարոտ որ ենք անցնում...»

ԲՈՂՈՐԸ.— Հա՛, հա՛, հա՛, իսկական ճառ եր...

ՇԱՔՐՈ.— Յես իմ աստված, լավ սկսեցիր ու լավ ել վերաջրիր:

ՍԻՄՈՆ.— Սրանք դիտի ձեր բերնից յսկած խոսքեր աս. հմի ձեզ հմ հարցնում. ձեզ դուր աս գալի՞...:

ՇԱՔՐՈ.— Յանի դա կեննց խոսքեր աս, վոր մարդու դուր գա: Եդ խոսքերը լեթե վոստիկանութիւնը լաի, քչերը կզան, տղաշորիցդ կհանեն, շլնքիդ տալով կտանեն չանդարմակի ուպրավլենին. դի տղա լես, արի նրանցից ազատվի Ձե, ախպեր, մենք մեր գլխից ձեռք քաշած ու ձեր եդ ճամփովը գնացող մարդ չենք: Անջախ գլուխներս դինջ մենք մեզ համար արխալին ապրում ենք. ինչ գործ ունենք. դուր տեղը դարձադալի ու խաթարալի մեջ խառնվենք:

ԲՈՂՈՐԸ.— Դրուստ աս ասում, ըսենց ել մենք մեզ համար հանգիստ ու դինջ ապրում ենք:

ԳՐԻԳՈՐ.— Ապրել ել կա, ապրել ել Ձեր և Գևորգ Բաղդասիւնի ապրելու մեջ կարծեմ վոր մեծ տարբերութիւն կա:

ՍԻՄՈՆ.— Փիս աչքածակի նման՝ դուք հենց մի գլուխ ուրիշի ունեցվածքի վրա չեք նախանձում: Յեթե դուք ուզում եք նրանց պես ապրեք, նրանց պես թագավորական պալատներում ու ամարաթներում փառավոր որ ու կլանք անցնեք, նրանց պես դուք ել ուտեք, խմեք, Ֆայտոններով ու կառեթներով ձեր քեֆին արխալին, ձեր սրտի ուզած վախտը դուրս գաք ու ման գաք, դուք ել նրանց պես գնացեք, ջաններիդ ջափա տվեք, հալալ քրտինք թափեք, վոր դուք ել ունենաք:

ԳՐԻԳՈՐ.— Տո վողորմելի, հալալ աշխատանքով, հալալ քըրտինք թափելով չեթե հարստանալու հնարավորութիւն լիներ, աշխարհիս լերեսին մենք ամենահարուստը կլինենք: Բայց թեր ե... ամենից շատ աշխատում ենք, ամենից շատ չարչարվում, տանջվում, ամենից շատ արլուն-քրտինք թափում, վոչ որնիրս լավանում, վոչ կլանքներս փոխվում, ելի են սովածն ենք, ելի են

տկլորը... իսկ նրանք, վոր աշխատանքից մի վերստ հեռու լին  
փախչում...

ՍԻՄՈՆ.—Ելի գնացին-եկան, նրանց լախիցը կպան. լես  
զարմանում հմ' թ'նչ եք ուզում նրանցից. հոքան ել մարդ անադու-  
հաց կլինի: Ախր նամուսն ել լավ բան ա ե... Նրանց հացով կե-  
րակրվեք, նրանց շվաքի տակ ապրեք, ելի դուք նրանց վրա խո-  
սմք, նրանց վրա մունաթ դնեք, սա աստոծ վերկուհի... Չե,  
ախպեր, ես վերջին ժամանակներս դուք շատ խարաբ ելաք: Ա-  
ռաջ մադուլ խելոք, նամուսով, արուսով տղերք ելիք, խազելինից  
սկսած մինչև են պասլեդնի դվորնիկն ել ձեզ սիրում ելին, ձեզ  
հարգում ելին: Համա ինչ վոր եղ մեր զավոդի բժիշկն եկավ, դուք  
նրա մոտ գնալ-գալ ունեցաք, դուք միանգամից փոխվեցիք. ել  
դուք մեր տեհած են առաջվա տղերքը չեք. ինչ վոր քամի լա մտել  
գլխներդ, խելքներդ թամամ կորցրել եք, արուսներդ կտրել, ել  
վոչ մեծ ու պատիկ եք ճանաչում և վոչ խազելինի պատիվը հաս-  
կանում. գլուխ եք բարձրացրել ու ինչ-վոր անիրագործելի բանե-  
րի մասին մտածում...

ԳՐԻԳՈՐ.—Դրա համար դուք ուրախ պետք ե լինեք, վոր  
մենք դարերի ստրուկներս կյանքի անողոք հարվածներից սկսում  
ենք սթափվել և մեր չարքաշ վիճակի բարելավման մասին մտա-  
ծել...

ՍԻՄՈՆ.—Փոնոզրափ, կատարյալ փոնոզրափ: Տո, եղ պարզ-  
աշկարա գիտենք, վոր եղ ասածներիդ վոչ մեկն ել ա քու խելքի  
ու քու մտքի բանը չի, ուրիշից սովորած, ուրիշից անգիր արած  
խոսքերով հումն ես զարմացնում:

ՇԱՔՐՈ.—Դրանք դիփ բշփի սովորացրած խոսքերն ա: Նա  
յա մեղավոր, նա յա սրանց բերանի կապը կտրել:

ՍԻՄՈՆ.—Յես զարմանում հմ. Նրա մեջ սրանք թ'նչ են տեսել,  
վոր եսքան հոգով-մարմնով կպել են նրան: Ուսումնական վոր ա,  
մեծ բան եք կարծում: Քիչ ուսումնականներ կամ, վոր երկու  
իշի գարի չեն կարողանում բաժանի: Կամ թե չե՝ նա վոր խելքը  
գլխին մարդ լինի, կգա ձեզ պես գլադա-գլուղեքի հետ գլուխ  
կդնի... Ախր դուք ել վոր շաշ չլինեք, նրան կլսեք, նրա փչած  
ստերին կհավատամք: Բա դուք չեք մտածում, վոր եղ մարդը ես  
որ եստեղ ա, եզուց ով ա իմանում՝ ուրա գնալու կորչի, դուք  
տեղը թ'նչ եք ձեր հացին քացով տալի, խազելինի աչքիցը ընկ-  
նում:

ԳՐԻԳՈՐ.—Տո վողորմելի, խազելինի աչքիցը մենք դրանով

պտի ընկնենք: Գլուխներս ել վոր նրա համար ծախենք, մատներս մոմ շինենք ու նրա առաջ վառենք, ելի միւսնուչն ե, նա մեր թշնամին ե, մենք՝ նրա...

ՇԱՔՐՈ.—Են ոլինները վոր դուք եք բերում նրա գլխին, թշնամի չե, հոգեհան հրեշտակ ել վոր դառնա, ելի քիչ ա: Համա ելի աստոծ կյանք տա նրանց, ելի նրանք են, վոր համբերում, են, ելի նրանք են, վոր մեզ համար ցավում-մտածում են:

ԱՐՇԱԿ.—Նրանք մեզ համար ցավող ու մտածող պտուղներ չեն, մեր արոււնը ծծող տղրուկներ են նրանք. վոր ճար ունենան, առավոտից մինչև լուս կրանացնեն ու չեն թողնի, վոր մի ազատ շունչ քաշենք...

ՍԻՄՈՆ.—Ախպեր, դե բոլ ա ելի, իծի ցավ հո չդառնք գըլխըներիս. խելոք եք, ձեզ համար վեր ընկեք. թնչ եք կպել մեր յախիցը ու ել պոկ չեք գալի. մեզնից ձեռ քաշեք ելի...

ԳԱՐԵԳՐԻՆ.—Մինչև ձեզ չհասկացնենք մեր ասածների ճշմարտութիւնը, ո՞վ ա ձեզնից ձեռ քաշողը...

ՍԻՄՈՆ.—Ըհ, ակաս-մակաս, քո Մգոն եր գլխներիս պակաս: Դու լել վոր խրատող դուրս եկար, ամեն ինչ դրստվեց: Ես տունը քանդվածները կասես ժամում կանգնած «խոնարիցո ապրիցո» ըլնն ասելիս. մեկը վերջացնում, մյուսն ա սկսում:

ՇԱՔՐՈ.—Ջահլաներս տարան, գլուխներս քամեցին. եսքան ել խոսալ կընի, վոր սրանք են խոսում:

ԳՐԻԳՈՐ.—Դու լել ես խոսում, ալ վողորմելի: Մոռացել էս, վոր առավոտները ենքան վաղ ելիք գալի, իրիգները ուշ գնում, վոր շաբաթներով չերխաներիդ չերեսը չեիլ տեսնում: Նրանք գիտելին, վոր հայր ունեն, բայց նրան չելին ճանաչում:

ՍԻՄՈՆ.—Տո տունը քանդված, դե բոլ ա ելի, քանի խոսաս, բերանումդ լեզու չմ, թէ ջաղացի չախչախ. առավոտից կգան, մինչև իրիգուն դո՛, դո՛, դո՛, բո՛, բո՛, բո՛, դո՛, դո՛, դո՛, բո՛, բո՛, բո՛:

ԲՈՂՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛ (ծիծաղ):

ՍԻՄՈՆ.—Պա՛, պա՛, պա՛, գլուխներս տարան ելի: Տո, վոր մենք չենք խոսում, ձեր նամուսին թնչ ա եկել: Ծաշից հետո դիփունանք խելքով խրատող դուրս եկան: Մեկը թատրոն ա հրավիրում, մեկը ժողովի չա կանչում, մի ուրիշը գիրք ա առաջարկում կարդանք, կասես կարդալ վոր ուզենանք, գրքերի տեղը չենք իմանում:

ԳՐԻԳՈՐ.—Սաղմոսի ու նարեկի նման գրքերի տեղը, իհարկե, կիմանաք, վերցրեք կարդացեք ու կարդացեք:

ՍԻՄՈՆ.—Դուք վոր Մարքսի ավետարանն եք կարդում, նրա համար ա խելքներդ ավելացել, վո՞նց չի:

ԱՐՇԱԿ.—Յեթե չի ավելանում, գոնե չի լիլ պակասում:

ՍԻՄՈՆ.—Լավ, լավ, ձեր փորացալը իմանում ենք, համա գուր ա, վոչինչ չի ըլի, մեզնից ձեր ժողովներին եկող չի լինելու. հո խեցի՞ք, դե հմի որեսի դենը ինչքան ուզում եք, խոսացեք, մի բան, վոր ձեր ասածները ըստեղից մտնելու լա, ըստեղից գուրս զա (մասի ծայրով իր ակաճճեքը ցույց սալով):

ԳՐԻԳՈՐ.—Յանի եղ զահրումարը գլուխ ամ, թե՛ տակը ճըղ-ված մեշոկ, վոր մի կողմից մտածը մյուս կողմից գուրս ա գալու: ԲՈՂՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛ (ծիծաղ):

ՍԻՄՈՆ.—Եղ լեզուներդ ձեր գլխին թե մի ոլին չըբրի, բաս չես Սիմոնը չըլնեմ: Կտեսնեք ելի, լպտածներ...

## Տ Ե Ս Ի Լ Ծ.

ՆՈՒՅՆՔ, ԳԵՎՈՐԳ, ՄՏԵՓԱՆ ՅԵՎ ՍԱՀԱԿ.

ԳԵՎՈՐԳ.—Գող կատվի նման դես ու դեն նայելով ներս ես մըտ-նում, կարծում ես քեզ տեսնող չկամ: Հրես մի ժամ ե՛ գործը սկսվել է, իսկ դու նոր ես՝ գալիս: Ստեփան, սրա վրա կեսոր կնշանակես:

ՍԱՀԱԿ.—Սաղելին, տասնհինգ բոպե չեմ ուշացել, իսկ իմ պարտքս ըլի՛ յերկու սհաթվա գործ առաջ գցեմ:

ԳԵՎՈՐԳ.—Դու պարտավոր ես այդ միշտ ել անել և դրա համար ել դու բոճիկ ես ստանում:

ՄՏԵՓԱՆ.—Յես ձեզ հազար անգամ ասել եմ՝ ժամանակին չեկեք. իսկ դուք իմ ասածը չեք լսում և չեք հասկանում:

ԳԵՎՈՐԳ.—Լավ արդարանալու միջոց ես ինչև՛ վաղ չես քնում, վոր ժամանակին վեր կենալ կարողանաս: Յերեկոները ինչև՛ սկսվեա զբաղվում. միզուցե քո միտքն ել ծովել, դու չի ես ժողովներ գնում:

ՍԱՀԱԿ.—Ձե, խազելին, աստոժ, յերկինք, չես ժողով չեմ գնացել, ժողով գնացողները ուրիշներն են. են տունը քանդվածները զավոգից վոր դուրս են գալիս, ել տան յերեսը հո չեն տեսնում: Մի գլուխ ժողովում են ընկած:

ԳԵՎՈՐԳ.—Յես քեզ զգուշացնում եմ, ուրիշներին չլսես. նրանց ասածներին չհավատաս, նրանք աչքիցս ընկած են, քեզ ել ուզում են գցին: Գնա, ուշացածդ ներում եմ:

(Ստեփանի հետ գուրս է գնում):

ՍԱՀԱԿ.—(Գլուխ է սալիս, գնում):

(Սիմոնի, Շաբույի կողմից մտնում է յեվ աշխատում):



## Տ Ե Ս Ի Լ Ե .

ԲԱՆՎՈՐՆԵՐ, ՄԻՆԱՍ ՅԵՎ ՀԵՏՈ ԱԲՐԱՀԱՄ.

ՄԻՆԱՍ. — Բժիշկը եկել ատ, ով ուզում ատ, թող տենա: (Նույնը մի քանի անգամ մյուս բաժանումներում կրկնում է):

ՍԱՀԱԿ. — Զգիտեմ ինչ ատ պատահել, կողքս շամփուրի նման ծակում ատ. նաֆաս չեմ կարողանում առնի: Գնամ տեսնեմ բժիշկը ինչ կասի:

(ԳՆՈՒՄ Ե):

ԱԲՐ. — Բարով ձեզ, տղերք:

ԲՈՂՈՐԸ. — Այ աստու բարին. բարով չեկար:

ԱՐՇԱԿ. — Արհամ, ի՞նչ արի:

ԱԲՐ. — Ի՞նչ պտի անեմ. դեղի փողը չեն տալիս, գործարանիցն ել դուրս են անում: Հիվանդությունս մի կողմից, տանը լեռնխանցս հոգսը մյուս կողմից, ինձ տանջում սպանում ատ... Թի ինչ ատ լինելու իմ վերջը, չես չգիտեմ:

ԳՐԻԳՈՐ. — Բու վերջն ել նուզնն ատ լինելու, ինչպես շատ ուրիշներինը:

ԱԲՐ. — Ես կեղտ ու մրի մեջ գիշեր-ցերեկ տանջվիր, չար-չարվիր, քունդ, հանգստությունդ խանգարիր, ամբողջ կյանքում սոված-ծարավ որ մթնացրու, ես խոնավ պատերի տակ, ես անտեր դազգայնների վրա միտք ու ոսկոռ դաշի, և վերջումը կրոնիցդ բռնած, շինքիդ տալով դուրս շարտեն... սև ըլի բանվորի որն ու կյանքը... Վոր ծնված որից աչք ենք բաց անում, մի լավ որ չենք տեսնում:

ԱՐՇԱԿ. — Կտեսնենք, Արհամ, կտեսնենք, եդ լավ որը մեզնից շատ հեռու չի, նրան շուտով մենք ել արժանի կլինենք:

ԱԲՐ. — Ախ, եդ որին դուբբան. եդ որը չես մեռած, գերեզմանումս պառկած ել վոր ըլիմ, գործի հրավիրող գուդոկի ենք քաղցր ու անուշ ձենը լսելուն պես չես իմ գերեզմանիցս հարություն կառնեմ, թեկուզ տասնութ ժամ աշխատելու համար նորից ես գործարան կվազեմ... Ես դժոխքը կանչող սև գուդոկի ձենը լսելուց չես վոր ամեն անգամ անիծել և միշտ չ՞ո, զահրումար եմ ասել՝ են լավ որերին մեզ համար ազատություն ու հանգստություն բերող կարմիր գուդոկի ձենը լսելուց ջան, ջան կկանչեմ:

(ԳՆՈՒՄ Ե ԲԺՇԿԻ ՄՈՑ, ԻՍԿ Սահակը բժՇԿԻ մոտից վերագառնում է):

## Տ Ե Ս Ի Լ 7.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԱՀԱԿ.

**ՍԱՀԱԿ.**—Ախպեր, լես եղ բժշկին սիրեցի. չերևում աս, վոր նա լավ մարդ աս: Նրա ասածները դուք թարս եք հասկացել: Նրա խոսալը, նրա համեստ, մարդավարի վերաբերմունքը, աստոծ գիտենա, քեֆս եկավ:

**ՄԻՄՈՆ.**—Յես վոնց որ տեսնում եմ, բժիշկը սրան ել ակնքել:

**ԲՈՂՈՐԸ.**—Ըտենց աս չերևում:

**ԱՐՇԱԿ.**—Եղ բժիշկը ձեզ ել ակնքելու, խելքներդ թւր աս:

**ՇԱՔՐՈ.**—Եղ տնաքանդը, դրուստ վոր, տերտեր հո չլ՞, վոր հասնողին կնքում աս:

**ԲՈՂՈՐԸ.**—Հա՛, հա՛, հա՛... (ծիծաղ):

## Տ Ե Ս Ի Լ 8.

### ՆՈՒՅՆՔ, ԳԵՎՈՐԳ, ՍՏԵՓԱՆ ՅԵՎ ԱԲՐԱՀԱՄ.

**ԳԵՎՈՐԳ.**—Ձեր դալմադալի ձենը փողոցն ե հասնում: Դուք ձեր ոտճիկը խոսելու համար եք ստանձում, թե գործ շինելու համար: Անամոթներ... սովորել եք ամբողջ որը դունչ-դնչի տալ և խոսելով որ մթնեցնել:

**ԱՐՇԱԿ.**—Մի բոպե վոր մեր խոսալուն վրա հասաք, դուք կարծում եք, վոր մենք եստեղ ամբողջ որը խոսում ենք...

**ՍՏԵՓԱՆ.**—Յեթե չեք խոսում, գործ ել չեք շինում...

**ԱՐՇԱԿ.**—Իսկ մեր գործը չերևի դու լես շինում, պարոն...

**ԳԵՎՈՐԳ.**—Ձանդ կարիք, անիրավ, այստեղ միայն դու չես, բացի քեզնից ուրիշներ ել կան: Ձեռքից չերկու կոպեկի գործ չի դուրս գա, իսկ խոսելիս չերկու արշին լեզու կհանես: (Դառնալով Ս.բրահամիճ) Դու ինչի՞ չեկար ցցվեցիր առաջս, լես քեզ ասացի, վոր փող չպիտի տամ:

**ԱԲՐ.**—Ձեր կամքն ե, կարող եք և չտալ:

**ԳԵՎՈՐԳ.**—Դու համարձակ ես խոսում:

**ԱԲՐ.**—Քաշվելու ի՞նչ ունեմ, փառք աստուծո, գողութուն, ավազակութուն չեմ արել:

**ԳԵՎՈՐԳ.**—Դու չերա՞զ ես տեսել, ինչ ե:

**ԱԲՐ.**—Մարդ ցերեկը չերազ չի տեսնում. տասնհինգ տա-

րի ձեր գործարանում աշխատելուց հետո հիվանդացել եմ և վու-  
քի վրա կանգնել չեմ կարողանում. միջոց տվեք ինձ բժշկվելու:  
ԳեՎՈՐԳ.—Հիվանդները կարող են գնալ հիվանդանոց: սա  
գործարան ե, հիվանդանոց կամ անկեխանոց չե:

ԱԲՐ.—Յերբ լես եկա ձեզ մտտ աշխատելու, բոլորովին ա-  
ռողջ ելի, բայց գործարանի պայմանները, նրա խոնավութունը  
հիվանդանալուս պատճառ են դարձել, հետևապես դուք պարտա-  
վոր եք ինձ բժշկել, կամ բավարարութուն տալ և ապա հեռաց-  
նել...

ԳեՎՈՐԳ.—Սուտ ես ասում, իմ գործարանի պայմանները  
վատ չեն, և վոչ ել խոնավ. զուր տեղը պատճառներ մի վորոնի  
և վոչ ել բավարարութուն ստանալու հույս ունեցիր: Հրես լես  
քու ներկայութեամբ սրանց կհարցնեմ. Սիմոն, առաջինը դու ասա:

ՍԻՄՈՆ.—Ինչ ասեմ, խաղելին. տասնութ տարի չա լես ես  
գործարանում աշխատում եմ, դեռ չեմ հիշում, վոր լես հիվան-  
դացած լինեմ:

ԳեՎՈՐԳ.—Իսկ լեթե գործարանիս պայմանները վատ լինե-  
լին և խոնավ, դու լել կհիվանդանալիր, այնպես չե: (Սիմոնը  
գլխով գրկակն ցռան է անում) Ահա, տեսնո՞ւմ ես: Սպասիր, մի  
ուրիշին ել հարցնենք. լես համոզված եմ, վոր նա լել նույնը  
կհաստատի. այո, նրանք քեզ պես ստախոս չեն. նրանք ճշմա-  
րիտը կասեն: Շաքրո, դու լինչ կասես:

ՇԱՔՐՈ.—Խաղելին, լես ել են կասեմ, ինչ վոր Սիմոնն  
ասաց:

ԱՐՇԱԿ.—Իսկ լես հակառակը կասեմ: Այո, ձեր գործարանի  
պայմանները վատ են և հակառողջապահական. հիվանդութեան  
դեպքը սա վոչ առաջինն ե և վոչ ել վերջինը. շատերն են այս-  
տեղ հիվանդացել և դուրս շարտվել, նույն վիճակը մեզ ե սպա-  
սում: Իսկ ճշմարտախոս տասնութ տարվա աշխատող վարպետ-  
ներ, լեթե համարձակութուն չունեք իսկութունը ասելու, գոնե  
լռելու քաջութուն ունեցեք:


ԳեՎՈՐԳ.—Ծածկիր գլխարկդ և դուրս կորիր, անիրավ, դու  
լես սրանց խելքից հանողը: Դե, շո՛ւտ... Առանց ուշանալու:

(Արեակը խալաքը հանում է, գլխարկը ծածկում):

ԱՐՇԱԿ.—Ընկերներ...

ԳեՎՈՐԳ.—Կորիր, դու այստեղ այլևս ընկերներ չունես,  
դուրս կորիր (հրում է): Ստեփան, գնա սրա հաշիվը տուր և ճա-  
նապարհ դիր:

(Ստեփանը հեկով գուրս է քանում):



ԱՐՇԱԿ.—Թող լես ինքս կգնամ: (Դուրս են գնում):

ԳԵՎՈՐԳ.—Անիրավ, դուք շատ եք լրբացել, ձեր չափը, սահմանը կորցրել: Մեծի պատիվ, հարգանք ասած հասկացողութունը ձեզ համար այլևս գոյութիւն չունի: Բոլորդ լեզու լեք առել և իրավունք եք պաշտպանում...

ԳԱՐԵԳԻՆ.—Յերբ նա վտանահարվում ե, այո, պիտի պաշտպանենք...

ԳԵՎՈՐԳ.—Դեհ, հիմա լել սա: Տո անիրավ, դու չտեսնիր ընկերոջդ ինչի համար դուրս արի, դու լել ես ուզում գնաս դուրսը սոված-ծարավ գկոտամս:

ԳԱՐԵԳԻՆ.—Աշխատավոր մարդը լերեք սոված չի մնա. հար գնամ աշխատեմ, քրտինք թափեմ, վոր մի կոտոր ցամաք հացի փող չստանամ... Յեթե կուզեք ճիշտը իմանալ, բանվորը չե, վոր սոված կմնա, այլ նա, ով ուրիշի աշխատանքն ե ուտում, ուրիշի քրտինքով ապրում...

ԳԵՎՈՐԳ.—Ձայնդ կտրիր, լակոտ: Դու չհամարձակվես իմ ներկայութեամբ այդպես խոսել: Յես ձեր ընկերը, ձեր բարեկամը չեմ, լես ձեր տերն եմ, ձեր գլխի տերը: Ինձ մոտ ձայն-ծայտուն հանելու դուք իրավունք չունեք: Դե, քանի վոր քու դեմքդ ել պարզվեց. դու լել ծածկիր գլխարկդ և դուրս կորիր...

ԳԱՐԵԳԻՆ.—Դուրս եք անձեմ, իրավունք ունեք. բայց վայ այն որը, լերբ այդ իրավունքները ձեզնից կխրվեն... Ընկերներ, ահա տեսնում եք՝ ինչ ե կատարվում ձեր շուրջը, ձեր աչքի առաջ, սա մի հայելի լե, վորտեղ ձեր պատկերն ե փայլում...

ԳԵՎՈՐԳ.—Դուրս կորիր, դու այլևս իրավունք չունես այստեղ խոսելու: Անպիտան, խառնակիչ... (միջից օճմբ բեղից բռնած օսնում ե): Ստեփան, սրա հաշի՞ն ել տուր և ճանապարհ դիր (հրում լել դուրս ե գցում): Անիրավ, դուք շատ եք լրբացել. հետներդ խոսել չի լինում: Բայց դուք մեղավոր չեք. գիտեմ ով ե այդ բոլորի պատճառը: Նա լե, վոր ձեր մտքերը պղտորում ե, նա լե, վոր իմ մասին զանազան հերյուրանքներ ե տարածում, և դուք նախորդ չիմանալով նրա հետին մտքերը՝ միամտաբար հետևում եք նրան և հավատում նրա ասածներին: Դուք ձեզ հաշիվ չեք տալիս և մի բողբ չեք մտածում, վոր ձեր խաղեկները ուրիշ խաղեկներերի նման չե. նա բարի լե, նրա մտածմունքը միշտ ձեր մասին ե լինում: Ո՞ւմ համար եմ հիմնել այս գործարանը, համար հավաքել գլխիս այս ահագին դալմաղալը, լեթե վոչ ձեզ և ձեզ նման խեղճ ու թշվառ բանվորներին կերակրելու համար...

ԱԲՐ.—Վնչ. դուք ճիշտ չեք ասում: Ամբողջ որը ճորտի նման աշխատելուց հետո մի կտոր ցամաք հաց շարտել մեր առջև և դա բարեգործութուն համարել. վնչ, դա բարեգործութուն չէ, այլ շահագործում: Նման բարեխառնների կարիքը մենք չենք զգում. այդ տեսակ բարեգործութուններ դուք կարող եք և չանել...

ԳԵՎՈՐԳ.—Դու դեռ այստեղ ես, և այդ համարձակ խոսողը դու լե՛ս: Դու չե՛լ դուրս կորի՛ր, դու չե՛լ ինձ հարկավոր չե՛ս:

ԱԲՐ.—Յերբ առողջ ելի, ձեզ հարկավոր ելի. իսկ այսոր չերբ ալս ապականված փոշելից ողում արյուն-քրտինք թափելով կլանքս փչացրի, առողջութունս կորցրի, այլևս ձեզ հարկավոր չե՛մ, դուրս եք գցում ինչպես մի անպետք փալսո՞ւ... Այս դրուժխան մեջ չես ո՛ւր գնամ, ո՞վ ինձ կընդունի: Յերեխաներս տանը սոված-ծարավ ինձ են սպասում. գնամ նրանց ի՛նչ ասեմ, նրանց ի՛նչ պատասխան տամ... Գնան ջուրը թափվե՛ն, դուք աստված չունե՛ք, դուք խիղճ չունե՛ք, դուք վոր ամիսը մի անգամ արժան չեք համարել մտնել գործարանը, ես վոր դուք հազարների ու միլիոնների տեր եք դառել... Իսկ չես վողորմելիս, վոր ամբողջ տասնհինգ տարի շարունակ ես կեղտ ու մրի մեջն եմ փտել, ես թուլթունոտ դազգլահների վրա կլանքս ու հողիս մաշել, եսոր չես տասնհինգ կոպեկ փող չունե՛մ՝ տանեմ հացի տամ, չերեխաներս կերակրեմ... Ահա, տեսնո՞ւմ եք, ես վկայականը սրանով չես իմ բավարարութունս կատանամ. այո՛, կատանամ... (Գճում է):

ԳԵՎՈՐԳ.—Ահա թե ինչն է նրան լեզու տվել: Սպասիր դու, Վնհան, չես քեզ ցույց կտամ... (Դուրս է գնում):

## Տ Ե Ս Ի Լ Գ.

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳԵՎՈՐԳԻ.

ԳՐԻԳՈՐ.—(Քոռեցքով խփում է զազգլախից) Վնչ, վնչ. համբերել այլևս անկարելի չէ: Ընկերներ. ա՛. բայց ո՛ւր են, այստեղ ընկերներ չկան... (Գճում է մյուս բաժանուց):

ԲՈՂՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛... (չերկար ծամամուկ ծիծաղում է):

ՇԱՔՐՈ.—Ընկերները հիմի թող վիզները քորեն, հա՛, հա՛...

ՄԻՄՈՆ.—Յես չելի ասում, վոր սրանց լեզուն իրանց գլխին խաթա չա բերելո՞ւ:

ՍԱՀԱԿ.—Մազալուն են եր, վոր են մի հողկորը վոնց

դրադ քաշվել, ձենը փորն եր գցել. ասա սկի խոսանց, ձեն-ծըպ-տուն հանեց...

ՇԱՔՐՈ.—Վճնց ձեն հաներ. ձեն հանելու համար չե՞ր, վոր են լերկուսին դուրս արեց: Ի՞նչ եք կարծում, խաղելինը դրանում մեղավոր մ:

ՍԻՄՈՆ.—Սկի լել մեղավոր չի: Ախր ի՞նչ են մտածում. ձեւ հետ են սպոր անում. ձեւ հետ են քլալլա-քլալլի տալիս: Են մարդը ել վճր որվա համարա մեզ հաց տալիս, պահում, վոր իրավունք չպիտի ունենա մեզ վրա խոսալու: Նա մեր խաղելինն ա, մեր գլխի տերն ա, մեզ վրա նա կխոսա լել, կչարանա լել. լերբ քեֆը տա, կբանացնի, լերբ չուզենա, կունիցդ բռնած շինքիդ տալով դուրս կանի...

ԲՈՂՈՐԸ.—Մարդը խաղելին ա, իրավունք ունի:

ՍԻՄՈՆ.—Դու տես ի՞նչ տեղն ա հասել, վոր խոսքի տակին-գլխին միշտ են են ասում, վոր զավոզը մերն ա, աշխատանքը մերն ա, նրա տերն ու տիրականն ել մենք պտի ըլենք:

ՇԱՔՐՈ.—Եդ ասողներից մեկն ել նա չե՞ր, ինչի՞ լեր լալկել-սովորել են մեզ մոտ մեծ-մեծ բռնուացնեն. համա խոսքը մեր մեջ ֆնա, լավ ազատվեցինք: Գլուխներս անջաղ մի դալմադալից կդինջանա:

ԲՈՂՈՐԸ.—Ձե, լախաներս դրանցից լավ թափ տվինք:

ՍԻՄՈՆ.—Են դուրս արածներին հմի տենանք բժիշկը հաց ա տալու պահի՞:

ՇԱՔՐՈ.—Ինքն իր համար շատ ունի, մնաց դրանց ել տա:

ՍԻՄՈՆ.—Դե վոր չունի, ել ձեր ա խալխին գլխահան անում ու հացից զրկում: Են դուրս արածների տեղը լես վոր ըլեմ, կըզնամ եդ բժշկի լախիցը կըռնեմ, ենքան կտամ, վոր իր ասածներն ել մոռանա:

ՍԱՀԱԿ.—Արա, Մինաս, թութուն ըբր, գիլզի ըբր:

(Միճասը շատ-շատ մտնում է):

ՄԻՆԱՍ.—Ի՞նչ վախճի թութուն ա, ի՞նչ վախտի գիլզի լա, հրեն են մեկել աղելենում զարաստովկա լեն արել, դուք կանգնել թութուն եք ուզում...

(Ներսից բանվորները լեվ բանվորուհիները աղմուկով ներս են մտնում):

ՆՈՒՅՆՔ, ԳՐԻԳՈՐ ՅԵՎ ՄՅՈՒՄ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԱՇ-  
 ԽԱՏՈՂ ԲՈՂՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ.

ԲՈՂՈՐԸ.— Գործադրել, գործադրել...

ՄԻՄՈՆ.— Ի՞նչ գործադուլի ժամանակ ե:

ԲՈՂՈՐԸ.— Ամենահարմար ժամանակն ե, գործադրել, գոր-  
 ծադրել...

ՇԱՔՐՈ.— Դուք գժվել էք, դուք խելագարվել էք, ի՞նչ ա,  
 մենք կստեղ որվա ուտելու հաց չունենք, դուք գործադուլի հա-  
 մար եք մտածում: Խալիս սովից կոտորելու միտք ունե՞ք:

ԳՐԻԳՈՐ.— Իսկ վոր ամբողջ ժամանակ աշխատում ենք, շատ  
 կուշտ ենք լինում: Յես ձեզ հավատացնում եմ, վոր մենք միշտ  
 քաղցած ենք և միշտ սոված... Ամբողջ տարվա մեջ մենք մի-  
 ալն լերկու որ կուշտ հացի կնստենք. դա զատկին ե լինում և  
 ջրհորնեքին, վորովհետև «բարի» մարդիկ այդ տոնական որե-  
 րումն են մեզ մտաբերում և իրենց լիառատ ու ճոխ սեղանի փըշ-  
 րանքները մեր առաջ թափում: Բայց դուք չպիտի մոռանաք,  
 վոր փողոցում թափառող անտուն ու անտեր շներն ել այդ որե-  
 րում կուշտ են լինում...

ԲՈՂՈՐԸ.— Ճիշտ ե... ճշմարիտ ե...

ԳՐԻԳՈՐ.— Յեթե ճիշտ ե, լեթե ճշմարիտ ե, ինչո՞ւ լեք  
 լռել... Ձեր բողոքը, ձեր տանջանքը, ձեր տառապանքը հայտնե-  
 լով մի՞թե մենք մեղավոր կլինենք... Մի՞թե մեր ճակատագիրն  
 ե՞ միշտ և ամենուրեք զրկանք ու հալածանք կրել և լուռթլամբ  
 տանել...

ԲՈՂՈՐԸ.— Վո՛չ, մենք լռել չենք կարող, մենք կկռվենք,  
 մենք կբողոքենք...

ՇԱՔՐՈ.— Ի՞նչո՞ւ կռվել, ինչո՞ւ բողոքել, խնդանքով ամեն  
 ինչ կարելի չե անել:

ԳՐԻԳՈՐ.— Մենք շատ ենք խնդրել, բայց վժը խնդիրք-  
 ներս ե հարգվել: Հիշում ես այն որը, լերբ մոտեցար վորդուդ  
 թաղման համար ավանս խնդրելու, վրադ այնպես գոռացին, վոր  
 ատելու խոսքդ նուրբիսկ մոռացար: Վո՛չ, մենք մեր իրավունքը  
 վերականգնելու համար նրանցից գթութլուն, վողորմածութլուն  
 աղերսող աղքատներ չենք... Մենք գործադուլ ենք հայտարա-  
 րում և կռվի միջոցով մեր պահանջները դնում...

ԲՈՂՈՐԸ.—Յերկարացնելու ժամանակը չե...

ԳՐԻԳՈՐ.—Թող այդպես լինի, հարցը դնենք քվեարկութիւն. ով համաձայն է գործադուլին, թող մատ բարձրացնի (Քացի Սիմոնից, Շաքոյից յեվ Սահակից բոլորը մաս եմ բարձրացնում): Գործադուլի հարցը վճռված է...

ԲՈՂՈՐԸ.—Գործադուլ... Գործադուլ...

## Տ Ե Ս Ի Լ 11.

### ՆՈՒՅՆՔ, ԳԵՎՈՐԳ ՅԵՎ ՍՏԵՓԱՆ.

ԳԵՎՈՐԳ.—Այս լինչ է նշանակում: Գործը թողած դուք ձեր էք գնում:

ԳՐԻԳՈՐ.—Այնտեղ, մեր դուրս արված ընկերների մոտ...

ԳԵՎՈՐԳ.—Բայց ինչձև. Յես ձեզ դուրս չեմ արել:

ԳՐԻԳՈՐ.—Իսկ ինչձով ենք լերաշխավոր, վոր վաղը կամ մյուս որը մեզ նուշնպես դուրս չպիտի անեք... ուրեմն ավելի լավ է մենք մեր կամքով հեռանանք... Իսկ յեթե դուք այդ չեք ուզում, տվեք մեր այս պահանջները, ընդունեցեք մեր դուրս արված ընկերներին, և մենք ստիպված կլինենք մնալ... (ճալիս է պահաճջաբերք. Գեվորգը վերցնում է, լուռ կարգում յեվ հաճկարձ կասաղած կերպով թուզքը պատռում):

ԳԵՎՈՐԳ.—Մրանցից և վոչ մեկը:

ԳՐԻԳՈՐ.—Ընկերներ, մեր պահանջը չհարգվեց. այդպես էլ պիտի լիներ... ինքնակամ կերպով նրանք մեզ վոչինչ չեն տվել և չպիտի տան... Նրանք մեզնից միայն խլել գիտեն, իսկ տալու մասին նրանք չեն մտածել և չեն էլ մտածում... Մեր կռիվը կռիվ է, մեր պահանջը՝ պահանջ... Գործադուլը մենք այստր պկսում ենք և մինչև վերջը կտանենք... «Մեկը ամենքի և ամենքը մեկի համար» — թող այս լինի մեր նշանաբանը...

ԲՈՂՈՐԸ.—Գործադուլ, գործադուլ...

(Քոլորը գնում եմ):

ՎԱՐԱԳՈՒՅՐ



## II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ.

Բեմը ներկայացնում է Գևորգ Բաղդանիչի տունը և բակը: Բեմի խորքում, աջ կողմը Գ. Բաղդանիչի տան դահլիճն է. դուռը և լերկու պատուհանները նայում են դեպի պատշգամբ, վորտեղից աստիճաններով իջնում են բակը: Պատշգամբը կահավորված է կիսայնվրոպական թեթև կահկարասիներով: Բակի խորքում լերկում է գործարանի կամարածև դուռը, դռան ճակատին լերկար ու մեծ ցուցանակ, աջ ու ձախ լուսամուտներ և տանիքի վրա բարձր ծխնելույզ:

Գործողութիւնը կատարվում է բակում և պատշգամբում:

### Տ Ե Ս Ի Լ 1.

#### ՄԱՐԳԱՐ.

(Սպիտակ Քարուկը կապած, բոգե գուլպաները յեվ լուսեերը հագից կահկարասիներե և ուղղում յեվ ցրանց վրայի փոսից սրբում):

ՄԱՐԳԱՐ.— (Յերգում է)

«Բաղալո ջան, Բաղալո,

«Շաքարի շիր Բաղալո,

«Ձեր բաղչի ծառի նուշը...

«Պաշեմ Հայկուշի թուշը:

(Այս երևը յերգելուց հետո նույն յեղանակով ցարուհակում է մումուալ):

Մարգը շուն ըլի, գել ըլի, հարուստի տանը նոքար չըլնի: Արդար ես թե մեղավոր, հասնողը գլխիդ դմփացնում ա: Բանվորները զաբաստովկա անեն ու չգնան բանելու, նոքարն ա մեղավոր: Աղջիկ-պարոնի շորերը մադիսկան չափսովը չկարի, նոքարն ա մեղավոր. կուխնումը են անտեր մկները բզբզեն, մուրարի բանկաները վեր գցեն կտտեն, նոքարն ա մեղավոր: Են զահրըմար քամին փչի քուչի ֆանարը հանգցնի, նոքարն ա մեղավոր:

Շունը կապած տեղից դուրս պրծնի, խալխին գզգզի, նոքարն ա մեղավոր: Մի մեծ լերկրաշարժ ըլի, աղի տունը իրա գլխին քանդվի, ելի նոքարն ա մեղավոր: Ախր նոքարը թնչ մեղավոր ա. թնչ քարը տա նա գլխին, վճր ջուրն ընկնի: Մի լերկու շահի փող են տալիս, են ել տասն անգամ քթնեքովս են հանում: Հետո ասում են, թե խալխը դինջ չի մնում, զարաստովկա չեն անում: Ախր վճնց չանեն:

Սաղ որը վորսկան շան պես դես ու դեն եմ վազում— հերիք չի, տանը ջոկ են բանացնում, կուխնումը ջոկ. աստված գիտենա, ես հարուստների սրտում մի եսքան սովեստ չի մնացել (մասի ծայրը ցույց տալով). սրանց ձեռքին հողիս դուրս ա եկել, ել հարաքաթ չի մնացել վոտներումս (ճասում ե բազկաբռոխն): Ուխտի, ես զահրմար կրեսլի վրա նստելը ինչ դինջ ա ըլում է... կասես հողիդ արքայութիւն մեջտեղում պազած ըլի: Ախպեր, տեսնում եք ես հարուստներն իրանց փտած ջանի զաղըը վոնց են իմանում...

(Գրսից վոսփի ձայն ե լսում յեվ իսկույն վոսփի յե կանգնում, իր գործը ցարուցակում):

## Տ Ե Ս Ի Լ 2.

### ՄԱՐԳԱՐ, ԳԵՎՈՐԳ ԵՅՎ ՍՏԵՓԱՆ.

ԳԵՎՈՐԳ.— Այդ համառ լակոտները թող լավ իմանան, վոր չես վորքան բարի, նուչնքան և չար եմ. լեթե նրանք իմ բարկութունս կբերեն, չես ամեն միջոցի կդիմեմ և նրանց արժանի պատիժը կտամ: Կատակներ անել չես չեմ սիրում: Լսիր, Մարգար:

ՄԱՐԳԱՐ.— (Մի կողմ) Տեր, դու փրկյա ի չարե...

ԳԵՎՈՐԳ.— (Մոռեցում ե յեվ ապօական) Տո հալվան, քեզ հետ մարդ ե խոսում թե չե: Անիրավ, դու լել ես լրբացել. աչքերդ կհանեմ, կաշիդ կմաշկեմ: Լսիր, բանվորները լեթե գալու լինեն, ներս չթողնես: Դե գնա կորի:

ՄԱՐԳԱՐ.— Ելի լավ պրծա: (Գնում ե):

ԳԵՎՈՐԳ.— Լսիր, Ստեփան, մի հայտարարութիւնս դրիք և կպցրու գործարանի դռանը, վոր չես ժամանակավորապես գործարանը փակում եմ և զնում եմ արտասահման:

ՍՏԵՓԱՆ.— Գետրգ Բաղդանիչ, դա լավ միտք ե. ալդ ուղղութիւնը չես վաղուց ե ինչ մտածում եմ:

ԳեւորԳ.—Մտածելը բավական չէ. հարկավոր է գործնական միջոցներ ձեռք առնել: Ահագին ֆւասաներ ենք կրում: Գործադուլը մինչև լէրբ պիտի շարունակվի:

ՄՏԵՓԱՆ.—Բանվորը ձկան որինակի մի բան է. ինչպես ձուկը առանց ջրի կյանք չունի, նույնպես և բանվորն առանց մի որ աշխատելու կյանք չի կարող ունենալ:

ԳեւորԳ.—Բայց փորձը ցույց է տալիս, վոր դա այդպես չէ: Վոր նրանք կարողանում են ավելի լերկար դիմանալ, քան այն, վոր մենք լենթադրում ելինք:

ՄՏԵՓԱՆ.—Մեր լենթադրութլունը սխալ չէր լինի, լեթե մի ուրիշ հանգամանք չգար, գործադուլի լերկար տեկու միակ և գլխավոր պատճառ չհանդիսանար: Գևորգ Բաղդանիչ, լես նոր իմացա, վոր ուրիշ գործարանի բանվորներ սերտ կապ ունեն մեր բանվորների հետ: Յեվ վոր նրանք գաղտնի ժողովներ են գումարել և վորոշել իրենց ստացած ռոճիկի մի վորոշ տոկոսը հատկացնել մեր գործադուլավոր բանվորների ոգտին:

ԳեւորԳ.—Ահա թե ինչ: Բայց դու այդ ինչպես կարողացար իմանալ:

ՄՏԵՓԱՆ.—Միամիտ մարդկանցից ամեն ինչ կարելի լե իմանալ: Բավական է մի քաղցր հայացք, կեղծ ժպիտ, ռոճիկների ավելացման խոստում, և այնուհետև ձեր առջև կրացվի գաղտնիքների մի ամբողջ շարան:

ԳեւորԳ.—Գաղտնի ժողով, հեղափոխական կապ, ռոճիկների վորոշ տոկոս... Ձե, Ստեփան, սուտ է, չհավատաս: Այդ անպիտան բանվորներն իրենք են ստեղծում այդ շինծու լուրերը և գիտամամբ տարածում...

ՄՏԵՓԱՆ.—Ա, վորպեսզի մենք լսենք և զիջենք նրանց պահանջները. հասկանալի լե, հասկանալի...

(Դրսից ազմուկ):

ԳեւորԳ.—Ստեփան, մի գնա տես՝ ես ինչ ազմուկ ե:

ՄՏԵՓԱՆ.—Յերևի բանվորներն են: (Վախեցած այս ու այն կողմը նայելով մոտենում է լուսամուտից):

ԳեւորԳ.—Դե, ել ինչ ես կանգնել, լեթե բանվորները լինեն, նրանք վրեժխնդիր լինելու համար կլինեն լեկած: Ել մի ուշանա, գնա հեռախոսով վոստիկանութլան հայտնիր, թող այս բոպելիս նրանք պահակներ ուղարկեն...

(Խորհից լսվում է Սիմոնի լեվ Մարգարի ձայնը):

Սիմոն.—Թող:

ՄԱՐԳԱՐ.—Ձեմ թողնի, չե, աղին ասել ա՛ չթողնաս:  
ՍԻՄՈՆ.—Յես քեզ ասում եմ՝ թո՛ղ:  
ՄԱՐԳԱՐ.—Յես քեզ ասում եմ, վոր չեմ թողնի:  
ՍԻՄՈՆ.—Թո՛ղ, ի՛նչ ես խեղդում, տո, քոլի արջ:

### Տ Ե Ս Ի Լ Յ.

ՆՈՒՅՆՔ, ՍԻՄՈՆ ՅԵՎ ՄԱՐԳԱՐ.

ՄԱՐԳԱՐ.—Յես չթողի, աղա:

ԳԵՎՈՐԳ.—Չոռ աղա, զահրումար աղա, դու ինձ սրտաճաք արիբ, հալվան: Յեթե մյուս անգամ դու իմ ասած խոսքը սխալ ես հասկացել, ել քեզ մի բոպե չեմ պահի: Տո հիմար, դու չգիտե՞ս, վոր Սիմոնը իմ հավատարիմ բանվորներին եւ Յես քեզ չեմ ասել, վոր նրան ամեն ժամանակ կարելի լի թողնել: Դե, կորի, աչքիցս հեռացրի:

ՄԱՐԳԱՐ.—Թողնում ել եմ, խաթա լա, չեմ թողնում, խաթա լա: (Դուրս ե գնում):

ՍԻՄՈՆ.—Շորերս թամաշա արեք, կասես շան ըռելս ըլիմ ընկած: Ել մի սաղ տեղ չի մնացել:

ԳԵՎՈՐԳ.—Լճվ, լճվ, դու լի քո շորերի հոգան ես քաշում: Առ, ես փողը վերցրու, կգնաս նորը կառնես: (Փող ե օտարի): Դե հիմա ասա տեսնեմ՝ ի՛նչ լուր ունես, բանվորները դալու մասին ի՛նչ են մտածում:

ՍԻՄՈՆ.—Եսոր-եգուց ա, խաղելին, ելած-չելածները ծախել, գրավ են գրել: Գիգոլնա, վոր նրանց նիսիա բանը-մանա տալիս, նրանով քիչ ու միչ լոլա են գնում. նա վոր չլիներ, նրանք մի որ չելին դիմանա, զաբաստովկեն հմի վաղուց քանդված վերջացած կլիներ:

ԳԵՎՈՐԳ.—Ահա թե վորտեղ ե թաղված շան գլուխը: Յես այդ անպիտան Գիգոլուն ցույց կտամ, թե ի՛նչ ե նշանակում գործադուլավոր բանվորներին ապառիկ մթիբք բաց թողնել: Լսիր, Ստեփան. դու այսոր անմիջապես կգնաս այդ ապուշին կհասկացնես, թող նա զգուշանա. հակառակ դեպքում լիս այդ մասին կհայտնեմ ուր հարկն ե: Իսկ դու, Սիմոն, ասում ես, վոր բանվորները մտադիր են գործադուլը դեռ լերկար շարունակել:

ՍԻՄՈՆ.—Ի՛նչ եք ասում, խաղելին. նրանցուհիս ել ի՛նչ հարաքլաթ ա մնացել. նրանք իլլաջ չունեն, նրանք մտածում են, վոր եսոր-եգուց գան ձեզնից խնդրվեն:

Գեւոր՝ Գ.—Վոր գործը սկսեմ, գան աշխատե՞ն. լսեմ ես, Ստեփան:

ՍՏԵՓԱՆ.—Յես ալդպես ել կարծում ելի:

Գեւոր՝ Գ.—Ուրիշ կերպ ել լինել չեր կարող: Սիմոն, դու քո խոսքդ շարունակիր. ասա՛ նրանց մասին ել ի՞նչ գիտես (Սիրահուզը ուզում է ներս գա, հանկարծ յետեւում):

Սիմոն.—Հա, մեկ ել են պետք է ասեմ, վոր ետը ս՛հաթի հնգին Գրիգորանց ասնը ժողով ա նշանակված, ընենց վոր գալու-չգալու մասին խորհրդակցութիւնն պտի ըլի. եդ ժողովին կարծեմ բժիշկն ել ա գնալու:

Գեւոր՝ Գ.—Այդ լավ չեղավ. դուռ աղվեսը յերկու վտարով է թակարդ ընկնելու: Յես նրան հիմա ցույց կտամ, թե բանվորներին տիրոջ դեմ գրգռելը ի՞նչ է նշանակում: Ստեփան, ել սպասելու ժամանակ չի, շտապիր վոստիկանապետի մոտ... Սիրանուշ, ինչ՞է համար ես ալդտեղ կանգնել. ի՞նչ ես ուզում:

#### Տ Ե Ս Ի Լ 4.

##### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ.

ՍԻՐԱՆ.—Գիրքս ելի ուզում վերցնել... գուցե յես ձեզ խանգարում եմ:

Գեւոր՝ Գ.—Խանգարելու վոչինչ չկա. մենք բոլորովին ուրիշ գործի մասին ենք խոսում: Գնանք, Ստեփան, ինչպես վոր Սիմոնը ասում է, հարկավոր է վոստիկանապետից թուլլտվութիւնն վերցնել և ալդ գործը շտապ կերպով սկսել...

(Գեւորը, Ստեփանը յեւ Սիմոնը գնում են):

#### Տ Ե Ս Ի Լ 5.

##### ՍԻՐԱՆ ՅԵՎ ՀԵՏՈ ՄԱՐԳԱՐ.

ՍԻՐԱՆ.—Ատելի մարդիկ, ստոր արարածներ, դուք ինձ խաբել չեք կարող. յես ձեր խոսակցութիւնը լսեցի. այստեղ ինչ-վոր դիվային ծրագիրներ են կազմվում, բայց դուք իրագործել նրանց չեք կարող: ('Նստում է գրասեղանի առջեւ, գիր է գրում, գնում ծրարի մեջ) Մարգար, Մարգար:

ՄԱՐԳԱՐ.—Համե, ի՞նչ եք հրամայում, բարիշնա:

ՍԻՐԱՆ.—Մարգար, դու պիտի գնաս բժշկի մոտ:

**ՄԱՐԳԱՐ.**—Բարիշնա, ախր նա ուրիշ քաղաք ա գնացել են  
որն ել աղեն զրկեց, գնացի, տանը չիբ: Բարիշնա, հարցնելը ա-  
մոթ չըլնի, հիվանդ հոչքս:

**ՍԻՐԱՆ.**—Այո, Մարգար, մի փոքր հիվանդ եմ, և այս նա-  
մակով լես նրանից դեղ եմ խնդրում. լեթե կտա, կրեբես: Բայց  
շուտ պետք է գնաս, վոր նա տանը լինի. ժամը հնգին նա ու-  
րիշ տեղ պիտի գնա: Լսիր, Մարգար, այդ մասին մեր տանը վոչ-  
վոք չպիտի իմանա:

**ՄԱՐԳԱՐ.**—Բարիշնա, աղջիկ պարոնն ել չիմանա:

**ՍԻՐԱՆ.**—Վոչվոք, հասկանա՞մ ես, վոչվոք:

**ՄԱՐԳԱՐ.**—Աչքիս վրա, բարիշնա. ընենց գնամ-գամ, վոր  
սատանան ել չիմանա: (Գրաբը վեցճուճ գուլս է վազում: Սի-  
րանուքը ժամացույցն է ճայում):

**ՍԻՐԱՆ.**—Արդեն ժամը չորսն է, լեթե մի փոքր ուշանա,  
ժողովում բոլորը կարող են ձերբակալվել: (Դուլս է գճում):

## Տ Ե Ս Ի Լ Ե.

### I, II և III ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐ.

(Պատահոված շոբոճ: Կիսամերկ յեվ բոբիկ յերեխաների  
ձեռքից բռնած՝ ցնցոսիճերի մեջ պարուկած ծծկեր մանուկ-  
ները գրկած մտնում են բակը յեվ այս ու այն կողմ ճայում):

**I ԲԱՆ.**—Տունը անտեր ա մնացել. եկեք տիրութիւնն անենք:

**II ԲԱՆ.**—Մեզնից զոչաղներ ուրիշները կան. մեզ փայ չի  
հասնի:

**III ԲԱՆ.**—Հարուստի տան դռները միշտ կողպած ա ըլում.  
ես վճնց ա, վոր սրանց դուռը բաց ա մնացել:

**I ԲԱՆՎՈՐՈՒՀԻ.**—Կողպած դուռը բաց անելը, դու կար-  
ծում ես, դժվար ա: Ես երկած սրտի վրա ընենց մի քացի կտամ,  
վոր երկաթի դուռ չե, պողպատի դռներն ել կրնկահան կանեմ:  
Խելքդ ձեր ա գնում: Յես են կանանցից չեմ, վոր ձեռքերս ծալած՝  
հավի պես տանը նստեմ ու սպասեմ, վոր մարդս գնա փող աշխա-  
տի ու բերի լես ուտեմ: Յես ես զավոդում տասը տարի աշխա-  
տել եմ... դազդյահի վրա ուրիշ բանվորների հետ արյուն-քրտինք  
եմ թափել...

**II ԲԱՆՎՈՐՈՒՀԻ.**—Կաներս թիլացավ, վոտքերս կոտորովեց.  
եկեք նստենք քիչ դիշնանանք, մինչև ես տան խախը մի տե-

դից բալքի չերևան: (Նստում եմ յեվ յերեխաներից հավաքում  
իրենց օուրջը):

II ԲԱՆՎՈՐՈՒՀԻ.— Սխչի, չընի՞ դրանք դրուստ վոր գնացած  
ըլին: Եդ ասուռ պատօժի եկածը հենց մի գլուխ են ա ասում, վոր  
զավոզը կողպում եմ, տուն ու տեղս հավաքեմ գնամ զագրանիցա:

I ԲԱՆ.— Զարաստովկա անելուց դեսը եդ անիծածը բան-  
վորների վրա ենքան չարացած, գազազած ա, վոր իր ասածը  
կանի:

III ԲԱՆ.— Ախչի, յես ելի չհասկացա, եդ զագրանիցան ի՞նչ  
բան ա, գեղ մ, քաղաք մ, խարարա յեկեղեցի լմ, ավերակ վանք մ,  
թի մի ուրիշ ուխտատեղի լմ, վոր դրանք տնով-տեղով թոփ են  
ըլիլ ու ամեն ինչ թողնում են գնան:

I ԲԱՆ.— Ըհ, հողը գլխիդ, վոր ըտենց աշխարհից բեխա-  
բար, ուղտի անգաճում քնած դատ ես. ախչի, զագրանիցան մեր  
սահմաններից դուրս ուրիշ թագավորի, ուրիշ ազգի չերկիր ա:

III ԲԱՆ.— Ախչի, բա ինչի՞ եդ յերկիրը մենք սկի չենք  
գնում և միանգամ ելա չենք տեսնում...

I ԲԱՆ.— Ըհ, հողը գլխիդ, վոր ըտենց զագրանիցա գնալու  
իշտահ ես ունեցել: Ախչի, վոնչ դու, վոնչ ել քու ոխտը պորտը  
եդ զագրանիցան երազումն ել չեն տեսնի: Զագրանիցա գնացողը  
սանդուխ-սաբաթներով լիքը երծաթ ու վոսկի փող ու դուժիննե-  
րով կարած մոզնի շորեր պտի ունենա: Դարդակ ջերով, ըտենց  
տկլոր ու չփլախ քեզ կթողնան, վոր դու մեր սահմանից դենը  
անցնես: Տասը տեղ առաջդ կկտրեն ու կխաճամփից քեզ յետ  
կդրկեն:

(Մագրազը յեսեվի գոնից մօճում ե սեճյակը յեվ այս ու  
այն կողմ ճայելուց հետո մոտեցնում ե լուսամուկներին յեվ  
զեպի բակը ճայում):

## Տ Ե Ս Ի Լ 7.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՄԱԳԹԱՂ.

ՄԱԳԹԱՂ.— Սիրանսուշ. Սիրանսուշ... Ես աղջիկը ճւր ա գնա-  
ցել, վոր չի յերևում... Են անիծված Մարգարն ել տանը չի: Մի  
ամբողջ ժամ ե ձայն եմ տալիս, մեկը լսող չկա: (Դուրս ե գա-  
լիս պառզգամբը):

III ԲԱՆ.— Ախչի, բն ասում եք տանը մարդ չկա, հրեն,  
խազեյկան:

II ԲԱՆ. — Գնանք հետը խոսենք:

I ԲԱՆ. — Նրա հետ թողեք լիս խոսամ: Նրա լերեսին լիս պտի ընենց խոսքեր ասեմ, վոր նրա սիրտը վառվի: Հարուստի կնկտերանց հետ ուրիշ ջուռա խոսել ա հարկավոր:

ՄԱԳԹ. — Ո՞վ եք դուք:

II ԲԱՆ. — Մենք ձեր գավոդում աշխատող բանվորուհիներ ենք:

ՄԱԳԹ. — Լավ, իսկ դուք չգիտե՞ք, վոր գործարանը չի աշխատում, ինչ՞նչ համար եք լեկել, ի՞նչ եք ուզում:

I ԲԱՆ. — Ի՞նչ ենք ուզում... Մենք ուզում ենք, վոր դուք ամեն ժամանակ ըտենց բախտավորության մեջ ըլեք, վոր դուք ըտենց փառք ու պատվով միշտ ապրեք, վոր դուք ձեր վե՞քը ու ըոլ սեղանին նստեք՝ սրտներիդ ուզածի չափ ուտեք, խմեք ու վայելեք... Մենք ուզում ենք, վոր դուք մեզ պես քամբախաչընեք, մեզ պես մոռացված ու հալածված չըլնեք, մեզ պես նեղ ու թշվառ որեր չտեսնեք, ձեր ունեցածով խնդաք և ձեր դովլաթովը միշտ ուրախանաք...

ՄԱԳԹ. — Ի՞նչ են նշանակում ձեր եղ խոսքերը, լիս չեմ հասկանում:

I ԲԱՆ. — Իսկ դու հասկանո՞ւմ ես, թե ինչի չա քու մարդը գավոդը կողպել ու մեզ ըսենց տկլոր ու չփլախ դցել քուչեքը... Իսկ դու հասկանո՞ւմ ես, թե ինչի լինեք մենք ըսենց վզներս ծռել ու ճորտի նման ձեր առաջը կանգնել: Իսկ դու հասկանո՞ւմ ես, թե ինչի ես երեխեքը չորացած կպել հն մեր դոշին և ուտել են ուզում. դու հասկանո՞ւմ ես, թե ինչի մեր քանդված ու ավերված տան խոնավ ու մութ պատերի տակ իրար գլխի լինեք թափվում ու սոված-ծարավ անքուն գիշերներ լուսացնում...

ՄԱԳԹԱՂ. — Քուրիկ, թույլ տվեք ինձ ասելու...

I ԲԱՆ. — Ներողութուն, ի՞նչ քույր, ո՞վ ասաց, թե լիս ձեր քույրն եմ: Դուք վճռատեղից ստեղծեցիք եղ միտքը... Ձեր քույրը ձեզ պես հագնված, ձեզ պես ճաշն ու նախաճաշիկը արած և ձեզ հետ միասին եղ բալկոնումը կանգնած կլինեք:

ՄԱԳԹԱՂ. — Ուրե՞նք դուք ուզում եք ասել, վոր...

I ԲԱՆ. — Մենք ուզում ենք ասել, վոր եղ նազվիք վոտներդ շատ կանգնելուց կցավի, կամ գնա ներս, կամ հրամայի, թող քեզ համար մի աթոռ բերեն: Մենք ուզում ենք ասել, վոր առանց շալի եղ քամու առաջ կանգնելը լավ չի. քամին կտա, կմրսես ու կհիվանդանաս: Արբեշումի ու վոսկու մեջ պահված-մեծացրած



հարուստի կնիկ ես, ցավեր ու նեղութիւններ քաշելուն դու սովոր չես, քեզ լավ պահի...

ՄԱԳԹԱՂ.—Վերջապես լես չեմ հասկանում. ի՞նչ նպատակով եք լեկել և այդ լերկար ու բարակ խոսակցութիւնը ինչի՞ համար ե: Դրանով դուք ի՞նչ եք ուզում ասել և ի՞նչ եք ուզում հասկացնել...

I ԲԱՆ.—Մենք ուզում ենք ասել, վոր արևի տակ կանդնելիք լավ չի, եդ սպիտակ լերեսդ ու ձեռքերդ արևից կսևանան. հրամայի, թող մի գոնտիկ բերեն, վերցրու ձեռք, նստիր եդ բալկոնը, քուչով գնացող-եկողին թամաշա արա: Ի՞նչ ցավ ունես, ի՞նչ վարդ ունես, երեխիդ փորը կշտացրել ես, աբրեշումի ու մախմուրի շորերը հագցրել, կանֆետ ու շոկոլադ ավել ձեռք, քոծի հետ դրկել ես բաղ ու բաղչան ման գան, կերածները մարսեն... դարդ անողն ու մտածողը թող մենք ըլենք, վոր մեր ես սոված-ծարավ, տկոբ ու չփլախ երեխանցը ամեն անգամ տեսնելիս, սրտներս ա տանջւում, հոգիներս մղկտում...

## Տ Ե Ս Ի Լ Ց.

### ՆՈՒՅՆԹ ՅԵՎ ԳԵՎՈՐԳ.

ԳԵՎՈՐԳ.—(Պատգամբից) Ես ի՞նչ ձեն ու ձուռ ե, ես ի՞նչ դալմադալ ե: Ինչի՞ համար եք լեկել, ի՞նչ եք ուզում:

I ԲԱՆ.—Իմացել ենք, վոր գնում ես դագրանիցա, եկել ենք քեզ ճամպու դնենք:

ԳԵՎՈՐԳ.—Ի՞նչ ես կանդնել սրանց հետ գլուխ դնում, դու սրանց թայն Ես, դու կարծում ես սրանց սասածը կհասկանամ, սրանց ասածին կարող ես պատասխան տամ. գնա ներս: (Մագրադից քաճում է ներս):

II ԲԱՆ.—Վոչ ու փուչը եկավ, լայնի չարեց թե կանգնի մի լերկու խոսք հետներս խոսա: Կնգան վերցրեց հետը ու ներս գնաց:

III ԲԱՆ.—Նրա համար հալրաթ մեծ անպատվութիւն ա, վոր եկավ տեսավ՝ իրա կնիկը մեզ հետ կանգնել խոսում ա:

I ԲԱՆ.—Անպատվութիւնը լես նրան հմի շանց կտամ. երբ-խեքը դրեք դրադ, ամենքդ մի կողմից քար վերցրեք, ընկնեք սրանց դռներն ու շուշեքը ջարդենք, հախ միայն տերը սրանց տունը քանդի... (լերեխաճերը վայր եճ գնում յեվ սկսում քարկոծել):

Գեվորգ.—Ի՞նչ եք անում, անզգամներ, դռները, լուսամուտները ի՞նչ եք շարդում:

I ԲԱՆ.—Աչքդ ել ենք հանում, լիսդ ել ենք խառնում. անխիղճ անաստված:

II ԲԱՆ.—Կտրվի ու ջնջվի ձեր քոքը:

III ԲԱՆ.—Դուք ել մեր որն ընկնեք, մեզ պես տանջվեք...

I ԲԱՆ.—Ախչի, ի՞նչ եք կանգնել, քար խփեք: (Խփում է):

Գեվորգ.—Ի՞նչ եք անում, անզգամներ... (Գլուխը լուսամուտից գուռն է բերում):

I ԲԱՆ.—Անզգամը քու կնիկն ա, վոր չերեսը պուղրա լա քսում ու սաղ որը սրա-նրա հետ պողրուզ արած՝ բուլվարները չափնփում...

Գեվորգ.—Ձայնդ կտրի, անամոթ, դու հասկանում ես ում հետ ես խոսում: Յես ես ըոպելիս հեռախոսով վոստիկանութլանը կհայտնեմ, և նրանք անմիջապես կգան ձեզ բոլորիդ կձերբակալեն և բանտը կտանեն: (Գճում է):

III ԲԱՆ.—Մենք հենց եդ ենք ուզում, մեր մարդկանց ձերբակալելուց և բանտ ղրկելուց հետո մեզ ել թող ձերբակալեն, մեզ ել թող բանտ ղրկեն: Ջհանդամը, մեզ ենտեղ գոնե մի կտոր հաց կտան:

I ԲԱՆ.—Գող-ավազակը իրանք ըլին, բանտը մեզ ղրկե՞ն... Նրանք ղրկել, կողոպտել են մեզ... նրանք տանջել ու չարչարել են մեզ... նրանք ծծել, քամել են մեր արյունը... նրանք քանդել, հիմնահատակ են արել մեր տունը... նրանք արհամարհել են մեր պատիվն ու նամուրը...

III ԲԱՆ.—Ախչի, եդ վոչ ու փուչը, եդ ասուռ պատժի ու կրակի եկածը ըղորթ վոր տելեֆոնով իմաց տվեց, հրեն մեզ համար վոստիկան ա գալիս:

## Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՊԱՀ.

(Քաղաքապետը հարբած է):

ՔԱՂԱՔ.—Ռազայդիտես...

I. ԲԱՆ.—Հայերեն խոսա, վոր պատասխանդ տամ. ոսերեն վոր խոսում ես, միլա քեզ հասկանում...

ՔԱՂ.—Դե, շատ մի խոսա, փասափուսաներդ հավաքեք, քաղվեք, ուղ ըլեք, գնացեք ձեր տները, ի՞նչ եք հավաքվել ես-

տեղ, կնգա բազար շինել: Դուք չգիտե՞ք, վոր առհասարակ հա-  
վաքվիլ և մի տեղ կանգնել խոսելը արգելվում Է... Բա դուք ես  
աշխարհում չե՞ք, դուք մեր որեքններին տեղակ չե՞ք, դուք մեր  
զակոններին ծանոթ չե՞ք... դե, հալդա, վճ, մա՛րշ:

Ի ԲԱՆ.— Զո՞ղա քու գլխին ել ու քու զակոնի գլխին ել...  
մի բարի պտուղ ել դուք չեք... զշեր-ցերեկ մեր լետեներեցը  
պտաւում եք, հոգեհան հրեշտակների նման գալիս եք գլխներիս  
չոքում... չեք թողնում թե հանգիստ սրտով մի չերկու բերան  
կանգնենք, իրար հետ խոսենք: Տանը նստել արգելում եք, քու-  
չին դուրս գալը արգելում եք, խաղելի՛նի հետ գալ խոսալը ար-  
գելում եք, զարաստովկա անելը արգելում եք... ես ի՞նչ զակոն աս,  
ես ի՞նչ որեքն աս...

ՔԱՂ.— Զայնդ կտրիր, հիմար կի՛ն, դու հասկանում ես, թե  
ինչ ես խոսում:

Ի ԲԱՆ.— Յես քեզ նման հարբած չեմ, վոր չհասկանամ,  
հոգս քու գլխին, տարին տասներկու ամիս դուք ըտենց հարբած  
պիտի ըլեք: Ենքան խմել-տրաքվել ես, վոր ել վոաքի վրա կան-  
գնել չես կարողանում: Դինու սկճորի նման կանգնած տեղդ  
տմբոտմբում ես: Քնթին թամաշ արեք, կասես փտած բաղըջան  
ըլի, վոր հուպ տաս, ով ա իմանում չերկու. վեզրա գի՛նի-արազ  
թափվի:

ՔԱՂԱՔ.— Զենդ կտրի, թե չե ել լեզուդ տակից կհանեմ:  
Դու կնիկարմատ չլինելիր, չես գիտելի քեզ հետ ինչպես կխոսելի  
Դե գնացեք, դուրս կորեք ետեղից.. դե, հալդա, վճ, մա՛րշ...

ԲՈՂՈՐԸ.— Մենք չենք գնում, մենք ետեղ գործ ունենք:

Ի ԲԱՆ.— Դուք ի՞նչ իրավունք ունեք մեր հաշիվներին  
խառնվելու. վոր բանվոր ենք, հո ձեր ձեռքին չեսիր չպիտի դառ-  
նանք. պալիցեկսկի լեք, գնացեք ձեր պալիցեկսկութլունը արեք,  
ինչի՞ համար եք լեկել ետեղ, ի՞նչ գործ ունեք մեզ հետ...

ՔԱՂԱՔ.— Ուրեմն դուք չեք ուզում ձեր կամքովը դուրս  
գալ: Լավ... (Սվիտսոկը տալով գնում է):

## Տ Ե Ս Ի Լ 10.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳԵՎՈՐԳ.

ԳԵՎՈՐԳ.— (Լուսամուտից) Դուք դեռ այստեղ ե՞ք, ձեր այդ  
սկըրը ու մերկ լակոտներին տարեք աչքիցս հեռացրեք, ի՞նչ ևք  
նրանց հավաքել հետներդ բերել...

Ի ԲԱՆ.— Բերել ենք, սրանց տեսնեք, բայթի ամաչեք: Տարին տասներկու ամիս աշխատում ենք ձեր զավոդում, տանջվում-չարչարվում ենք՝ ստացած ոոճիկներովս չենք կարողանում թե մի լերկու արշին չիթ առնենք, կարենք, վզներս զցենք, իսկ ձեր տանը որը տասը տեսակ շոր եք հաղնում, սհաթը մի փաստն փոխում... Դուք ձեր վրա ծախսած հաղարները չեք տեսնում, ձեր կերածը, ձեր քսո ու փուչ արածը ձեր աչքին չի լերևում, իսկ խնայում եք թե բանվորների պահանջը տաք, վոր գործագույր վերջանա, գանք աշխատենք...

ԳԵՎՈՐԳ.— Հետո:

Ի ԲԱՆ.— Հետո են, վոր զարաստովկի պատճառով դուք ահագին միասնիկ եք կրում, ձեր աչքին դա չի լերևում, իսկ դուք հայտարարութուն եք կպցնում, թե՝ «զավոդը կողպում եմ, գնամ զագրանիցա». գնում ես զագրանիցա՝ ԲՆՆ անես, լետեիցդ կարմիր ծաղիկ են զրկել, թե ենտեղ հենց միքանիսը քեզ ելին կարոտեի, քեզ ելին սպասում...

ԳԵՎՈՐԳ.— Հետո, հետո...

Ի ԲԱՆ.— Հետո են, վոր մենք ետեղ ամրոզ կլանքներս փտացնում ենք, լերկու վերստի վրա տասը տարին մի անգամ մեր ծանոթների, մեր բարեկամների տեսության չենք կարողանում գնալ, իսկ դուք շաքաթը մի անգամ զագրանիցա չեք վաղում... Կարծես զագրանիցան ձեր պապոնց առնն ա:

ԳԵՎՈՐԳ.— Վերջացրի՞ր ճառդ:

Ի ԲԱՆ.— Վերջացրի:

ԳԵՎՈՐԳ.— Դե, ուրեմն, հիմա կարող եք ձեզ ազատ համարել: Յե՛վ քանի դեռ վոստիկանութունը չի լեկել, դուք ձեր լերխաներին հավաքեք գնացեք: Զուր տեղը կլանքներդ փտանդի միք լենթարկիլ: Յեթե դուք ձեզ համար չեք մտածում, գոնե այդ փոքրիկ լերխաների համար պարտավոր եք մտածելու: Իսկ ինչ վերաբերում է ձեր ամուսինների բանտարկությանը, լես ձեզ պետք է ասեմ, վոր կառավարութունը առանց իմ և ձեր կամքը հարցնելու հետապնդում է հեղափոխականներին և այն բոլորին, ովքեր կառավարության որենքների դեմ են գնում: Ձեր ամուսինները մի գործարանում աշխատելով՝ միևնույն ժամանակ իրենց հեղափոխական աշխատանքն են տարել և դրա համար ել նրանք պետք է պատժվեն:

(ԳՅՈՒՄ Ե):

## Տ Ե Ս Ի Լ 11.

ՆՈՒՅՆՔ, ԲԱՂԱԲԱՊԱՀ ՅԵՎ ՊԱՀԱՊԱՆ.

(Դռնապահը սպիտակ գոգնոցը կապած յեվ կարճ փայտե Զեռֆինգ),

ԲԱՂԱԲ. — Հրես սրանք են: Յեկել հավաքվիլ են ետեղ, ջհուղի բազար շինել: Դե հիմի ասեք տեսնեմ, գնալու միտք ունի՞ք, թե չի:

ԴԻՆԱՊ. — Կանգնել ես սրանց հետ մասլահաթ անում. չես սրանց ընենց դուրս անեմ, վոր քեփդ գա: (Քաղաքապահի սկանջից) Սրանց են փափուկ տեղից քիչ վոր կմշտես, զոռով ել վոր նրանց ես հայաթումը պահես, ել նրանք չեն մնա:

Ի ԲԱՆ. — Ի՞նչ ասացիր, եդ իմը կմշտես. ալ հողիմ գլուխըդ. դու եդ իմ տեղն ես մեզ դնում. դուք կարծում եք՝ մինք ձեք ոսի մատուշկաներից է՞նք... Այ ձեզ կմշտել. ալ ձեզ կմշտել: (Սպասկում ե ցրանց, յեվ ցրանց յերկուսով փախում են. իսկ վանայք ցրանց հետապնդում են):

## Տ Ե Ս Ի Լ 12.

ԳԵՎՈՐԳ ՅԵՎ ՄԱԳԹԱՂ.

(Սենյակում):

ԳԵՎՈՐԳ. — Ահա թե ինչ, ուրեմն իմ տանը, իմ սեփական հարկի տակ հեղափոխական ոջախ ե ստեղծվել, վորի մասին չես գաղափար անգամ չուենեմ: Գիտեմ, գիտեմ՝ վորտեղ ե թաղված այդ ոձի գլուխը: Մարգար: Շուտով ամեն ինչ կպարզվի: Մարգար:

ՄԱԳԹԱՂ. — Համե, աղա:

ԳԵՎՈՐԳ. — Գնա բժշկին կանչիր, ասա՛ աղան քեզ հետ ուզում ե խոսի, թող ես բոպելիս գա ինձ մոտ: (Մարգարը օտապ-օտապ գնում ե միեջեվ զուռը յեվ իսկույն յե օտոնում):

ՄԱԳԹԱՂ. — Աղա, նա վոր տանը չընի՛ ուրիշ վժիր դոխտուրը բերեմ:

ԳԵՎՈՐԳ. — Գնա կորի, այտեղ հիվանդ վոչվոք չկա:

(Մարգարը գնում ե):

ՄԱԳԹԱՂ. — Ինչո՞ւ համար ես նրան կանչում. ի՞նչ ես ուզում դու նրանից:

ԳԵՎՈՐԳ. — Դու այդ հետո կիմանաս: չես ինչպես տեսնում

եմ՝ իր հեղափոխական մտքերով նա ձեզ ել ե վարակել և ձեզ միջոցով նա աչտեղ սերտ կապեր ե հաստատել և բանվորներէ մեջ դադանի աշխատանքներ ե տանում... (Մտածում ե) Գեղեցիկ և հարուստ ոժիտով աղջիկ... չերջանիկ ու բախտավոր կյանք... փալլուն ապագա... գործարանային բանվորութուն... կուսակցական աշխատանք... գործադուլ... ապստամբութուն... հեղափոխութիւն... Ձե, լավ ե մտածված, լավ ե ծրագրված... Հա, հա, հա... լավ միտք ե, լավ անորժակ ե...

ՄԱԳԹԱՂ.—Ձուր ես դու աղպես կարծում, նա այդ տեսակ մտադրութիւն չունի, քո հարստութեան, քո աղջկա ոժտի համար նա չի լել մտածում: Այդ մասին դու կարող ես բոլորովին հանդիստ լինել, իսկ ինչ վերաբերում ե նրան, թե կարող ե պատահի, վոր նրանք սիրահարված լինեն, դա լել մի մեծ մեղք չե: Յես կարծում եմ, վոր դու ավելի գո՞ պիտի լինես, չիթե Սիրանուշը այդ տեսակ խելոք ընտրութիւն ե արել... Ճիշտ ե, նա փող, հարստութիւն չունի, բայց ուտում, գիտութիւն հո ունի, ուրիշ ել ի՞նչ ես ուզում... հետեապես դու չպիտի բարկանաս և բարկութեանդ թուչնը խեղճ մարդու գլխին թափես...

ԳԵՎՈՐԳ.—Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել. վոր լես նրա կորստեան պատճառ եմ ուզում դառնամ... վոր լես միջոցներ եմ մտածում նրա կյանքի դեմ...

ՄԱԳԹԱՂ.—Յես այդ չասացի...

ԳԵՎՈՐԳ.—Դու շատ բան ասացիր. քո խոսքերի մեջ այդ միտքը, անկասկած, կար... Դե, խոսիր, պարզիւր ասածներդ:

ՄԱԳԹԱՂ.—Անհասկանալի լես վոչինչ չասացի... աստված իմ, աչքերդ արչունով ևն լցված, քո այդ ալլալված դեմքից լես ասրսափում եմ... (Հեռացալու փորձ ե անում):

ԳԵՎՈՐԳ.—Ո՛ւր, սպասիր... (Թեւից բռնում ե, լեռ քաշում),

ՄԱԳԹԱՂ.—Ի՞նչ ես ուզում, թող, հեռացիր ինձանից...

(Մտնում ե Սիրանուշը յիվ ապօած ցալում):

## Տ Ե Ս Ի Լ 13.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ.

ՍԻՐԱՆ.—Դարձլալ կուի:

ԳԵՎՈՐԳ.—Լորի, անպատկա՛ռ, դու լես այս բոլորի պատճառը:

ՍԻՐԱՆ.—Այելի շուտ դուք... որ չի լինում, վոր դուք մեզ հետ չկուվեք: Մանկութիւնից ձեր քաղցր խոսքը լսելու կարոտ

Ֆնացի: Ամեն որ կոիվ, ամեն որ սրտնեղութիւն... և սա տճն  
ե, սա կլանք ե... չերանի չե՛րբ ե լինելու այս բոլորի վերջը...

ԳեւորՊԳ.— Ձայնդ կտրիր, ապա թե վոչ լիս քեզ կխեղղեմ...

(Հարձակվում է Սիրահուօի վրա, Մագքաղը արգե-  
լում է: Վահագը մտնում է յեվ զարմացած նայում):

ՄԱԳԹԱՂ.— Ո՛ւմը խեղղես, քո հարազատ, քո միակ զավակի՛ն:

ԳեւորՊԳ.— Յես հարազատ չունեմ, դուք բոլորդ ինձ ատելի  
չեք, - կին, զավակ, բանվոր, ծանոթ, բարեկամ՝ բոլորը, բոլորը  
ինձ թշնամի լին: (Հանկարծ նկատում է Վահագին): Ա՞, դու  
ալստեղ ե՞ս... այս շփոթները դու լիս լցրել սրանց գլուխը... ա-  
պերախտ, գործարան քանդեցիր, խելք ու հնազանդ բանվորու-  
թիւնը գժվացրիր, խելքահան արիւր, հիմա լիս ընտանեկան խա-  
ղաղ կլանքս ես ուղում թունավորե՛լ, սրմնց ես լարել իմ դեմ...  
դճւրս, դճւրս կորիր իմ տնից, չհամարձակվես մյուս անգամ  
վտար դնել իմ շեմքը... քեզ նմանների հետ լիս ալլես գործ չեմ  
ուղում ունենալ:

ՎԱՀԱՆ.— Գետրդ Բաղդանիչ:

ԳեւորՊԳ.— Վոչ մի խոսք:

ՎԱՀԱՆ.— Գետրդ Բաղդանիչ, թույլ տվեք բացատրելու:

ԳեւորՊԳ.— Ինձ հարկավոր չեն քո բացատրութիւնները,  
դուրս կորիր իմ տնից, խառնակիչ...

ՎԱՀԱՆ.— Գետրդ Բաղդանիչ, լավ դիտեցեք դիմացներդ:

ԳեւորՊԳ.— Տեսնում եմ, պարոն, ուրիշի փշրանքներով մե-  
ծացած աղքատներից մեկը և վոչ ավելին...

ՎԱՀԱՆ.— Յեթե դուք ձեր կարողութիւնից շլացած, աղ-  
քատներին մարդ չեք ուղում ճանաչել... սակայն իմացած լեղեք,  
վոր լավ ե լինել աղքատ՝ արդարութեամբ, քան հարուստ՝ անի-  
րավութեամբ...

ԳեւորՊԳ.— Դու դեռ համարձակվում ես իմ դեմ խոսել, հա-  
կաճառե՞լ...

ՎԱՀԱՆ.— Գուցե կհրամայելիք սողալ, զալարվել ձեր վտա-  
քերի տակ:

ԳեւորՊԳ.— Ապերախտ, քո կողմից այդ ներողութիւն խնդ-  
րելու փոխարե՞ն ե... Ի՞նչ իրավունքով դու համարձակվեցիր  
բանվորին վկայական տալ և հաստատել նրան իմ գործարա-  
նում հիվանդացած լինելը: Յեվ քո տված այդ կեղտոտ թղթի  
կտորի պատճառով լիս ստիպված պիտի լինեմ հարյուր ուտրի  
փող տալու մի քոսոտ բանվորի, վորի վրա թքելն անգամ ափ-  
սոտում եմ:

ՎԱՀԱՆ.—Բայց դուք մոռանում եք, վոր այդ քոսոտ բան-  
վորը ամբողջ տասնուհինգ տարի իր ուժն ու լեռանդը ձեր ող-  
տինն է սպառել... և դուք այսոր նրա քայքայված առողջութիւնը,  
վերականգնելու համար այդ չնչին դումարը նուշնիսկ խնայում  
եք... նրանց քրտինքի դառը կաթիլներն է, վոր ձեզ միջոց են  
տալիս այս հոյակապ պալատներում ապրելու, մինչդեռ գործա-  
բանի այն կեդտ ու մրի մեջ փտող, ագիտութիւն խավարի մեջ  
խարխափող այն թշվառ արարածները ընկած մութ ու խոնավ  
ներքնահարկում ցամաք հացի կարոտ որ են անցնում...

ԳԵՎՈՐԳ.—Դե բավական է... չերախտամոռ... միթե յե-  
քեզ դրա համար ուսման տվի, գիտութիւն տեր դարձրի, վոր  
այսոր դաս և գլխիս դատավորի պաշտոն կատարես:

ՍԻՐԱՆ.—Սուտ եք ասում, նա ձեզանից բարերարված չե-  
մարդասիրական զգացմունքը չե, վոր ձեզ թեկադրել և ոգնու-  
թիւն ձեռք մեկնել նրան, վորի կյանքի դեմ դուք այսոր ծրա-  
զըրներ ելիք մշակում:

ԳԵՎՈՐԳ.—Ձայնդ կտրիւր, անպատկճո, քեզ գլխիս վերա-  
հսկի՞չ են նշանակել, ի՞նչ է, վոր ամեն ժամանակ և ամեն մի  
քայլափոխում հետևում ես ինձ:

ՍԻՐԱՆ.—Հանցավորներին, այժ, պետք է հետևել...

ԳԵՎՈՐԳ.—Անզգամ... (Հարձակվում է վրան):

ՄԱԳԹԱՂ.—Հանգստացիր, ալ մարդ, ի՞նչ յեղավ քեզ...

ԳԵՎՈՐԳ.—Թ՛հող, թ՛հող նրա մագբրից բռնեմ և դուրս շարտեմ:

ՄԱԳԹԱՂ.—Ուշքի արի և մտածիր, թե ի՞նչ ես խոսում...

միթե կարելի չե, վոր մարդ իր վորդուն այդ կերպ վերաբերվի...

ԳԵՎՈՐԳ.—Սուտ ես ասում, նա իմ վրդին չե...

ՍԻՐԱՆ.—Մեծ բախտավորութիւնն կլինի, յեթե մի խեղճ ու  
աղքատ ընտանիքի զավակ լինելի...

ԳԵՎՈՐԳ.— Լռեցրու նրան...

ՄԱԳԹԱՂ.—Լավ, նա լռում ե: Գնանք, մի փոքր հանգստա-  
ցիր, ահուհետև ամեն ինչ կուղղվի... (Գեվորգ յեվ Մագթաղ  
զնում եմ):

## ՏԵՍԻԼ 14.

### ՍԻՐԱՆՈՒՇ ՅԵՎ ՎԱՀԱՆ.

ՎԱՀԱՆ.—Սիրանուշ, այդ ի՞նչ լսեցի, այդ ի՞նչ ասացիր:

ՍԻՐԱՆ.—Կպտմեմ, յես պարտավոր եմ քեզ բոլորը պատ-  
մելու: Բայց նախքան այդ, այստեղից մենք պետք է հեռանանք-



լես այստեղ մի բոսիկ ալլես չեմ ուզում մնալ: Վահան, սիրելիս, իմ ամբողջ կյանքով քեզ եմ սլարտակեան. դու փշրեցիր իմ կաշկանդված մտքիս կասկանքները և այսօր դարձայլ դու չես, վոր իմ ազատարարի դերը պիտի ստանձնես... կյանքիցս զատ ուրիշ բան չունեմ և ահա նա քեզ եմ տալիս, հեռացրու, ազատիր ինձ այստեղից:

ՎԱՀԱՆ.— Ուրեմն դու վճռել ես անսպասձառ հեռանալ:

ՄԻՐԱՆ.— Հեռանալ և վորքան կարելի չե շուտ. քեզ հետ մի ամենաաղքատ խրճիթում, մի կտոր ցամաք հացով չես ավելի ուրախ, ավելի չեք ջանիլ կլինեմ, քան այս զարդարուն, շքեղ դահլիճում... Ի՞նչ եմ անում այս շքեղութունը, այս պերճանքը, բազմատեսակ խորտիկներով լի այն ճոխ սեղանը, չեք ունի ուրիշ քրտիճի, ուրիշ բերանից խլված պատառներով և ճոխացրած...:

ՎԱՀԱՆ.— Հանգստացիր, սիրելիս, դու շատ ես հուզված, դու շատ ես վրդովված: Այդ առթիվ մենք կմտածենք և քեզ հետ միասին կխորհենք... Բայց ահա նրանք գալիս են. չես կհեռանամ, համբերիր մի փոքր ևս և դու ընդմիջտ ազատ կլինես այս տնից, այս խեղդող մթնոլորտից, ուր վիշտն ու տանջանքն է քեզ բաժին ընկել. Ցտեսութուն... (գնում է):

## ՏԵՍԻԼ 15.

### ՄԱՐԳԱՐ ՅԵՎ ՀԵՐԻՔՆԱԶ.

(Յերկուսով ծաղկամաճճերը գերս եճ բերում):

ՄԱՐԳԱՐ... Ը՛հ, անտեր մնաս... տունը մտնես, ծաղիկներ ա, բաղչեն ծաղիկներ ա, կանտորը ծաղիկներ ա, կուխնում ծաղիկներ ա, հայաթում ծաղիկներ ա... Ես ծաղիկների փողով յարաբ քանի սոված կկշտանա... Մեր զարաստովկա արած բանվորի կնանիքը քիչ առաջ վոր չեկել հայաթում կովում ելին, նրանց սոված երեխեքն էլ, վոր ընենց մրմնջալով լաց են ըլնում ու մորենրիցը հաց ուզում, Հերիքնազ ջան, են ա լացս գալիս ելր մոտս թե փող ունեցել էլի, աստո՞՞՞ դիտենա, դի՛ի կտայի նրանց...:

ՀԵՐԻՔՆԱԶ.— Աղան էլ տվեց վճնց չե... գարսդավոյ կանչեց ու հայաթիցը դիփունանց դուրս արեց...:

ՄԱՐԳԱՐ.— Կոտորվեք, քլասիբներ, կոտորվեք... Յանի ես չի՞ ձեր որը... Ա՛խ, վոչինչ չեմ ուզում, երկու սճաթ աստված դառնամ:

ՀԵՐԻՔՆԱԶ.—Ը՛հ, հոգս գլխիդ. միթո՞մ դու չե՛լ բան ասիր. վոր աստված դառնաս, ի՞նչ պտի անես:

ՄԱՐԳԱՐ.—Այ թե ինչ. ամենից առաջ ես աշխարհը շուռ կտամ... շուռ տալը դու ուրիշ բան չհասկանաս: Ընենց վոր՝ լեր-կիրճը դա մեր վտանքի տակը, իսկ դեռի՛նը զնա նրա տեղը: Հետո մարդկանց խասլաթները կփոխեմ ու կհրամայեմ, վոր որի-որդները տիկի՛ններ դառնան, տիկի՛ններ՝ որի-որդ, հարսը սկե-սուր դառնա, սկեսուրը՝ հարս, տղամարդը կնիկ դառնա, կնիկը՝ մարդ, հարուստները քյասիրանան, քյասիրները հարստանան, մեռելները սաղանան, սաղերը մեռնեն... արա դու ե՛ն վախո՞ր թամաշա արա, թե մեջները ինչ զալարալը կընկնի, հա՛, հա՛, հա՛:

ՀԵՐԻՔՆԱԶ.—Հա՛, հա՛, հա՛: (Նախ ծիծաղում է յե՛վ հետ լաց լինում) Վա՛յ, վա՛յ, վա՛յ, գլխիս ցավը բռնեց:

(Գլուխը ծեկացը գրած լաց է լինում):

ՄԱՐԳԱՐ.—Խեղճ Հերիքնազ, լերկու շարաթ ա գլխացավից մեռնում ես, քեզ մտիկ տվող չկա, համա լերեզի առավոտ ե՛ն սատկած մոխրիկը քիչ կնձկնձում եր, ե՛ն սհաթը վերցրին ֆայ-տոնով դոխտուրի կուշար տարան: (Հերիքնազի գլխին յերկու ձեռքով խփում է) Մեռնես, գլուխ, մեռնես, վոր սրանց կշախ մի շան չափ ել պատիվ չունես...

ՀԵՐԻՔՆԱԶ.—Դու ի՞նչ ես գլխիս խփում... (գլուխը բռնած դուրս է գնում):

ՄԱՐԳԱՐ.—մանի ես չի՛ քյասիրի որը: Հերիքնազ ջան, նեղացար. վա՛յ լես քու հոգին ուտեմ, լես քեզ նրա համար չխսիե-ցի, վոր դու նեղանաս. լես քո՛ւ գլխին դուրբան, քու ջանիդ դուրբան, արի բարշենք, արի բարշենք...

(Վազելով նրա յեսե՛վից դուրս է գնում):

ՏԵՍԻԼ 16.

ԳԵՎՈՐԳ ՅԵՎ ՍՏԵՓԱՆ.

(Բակում զբոսնում են):

ՍՏԵՓԱՆ.—Գեորգ Բաղդանիչ, հաղթությունը մեր կողմն է. Միքանի բանվորներ ես ձերբակալեցի՛ն:

ԳԵՎՈՐԳ.—Ի՞նչպես, լերեի ելի նոր ժողով ելին գումարել:

ՍՏԵՓԱՆ.—Այո, լուր բերին, վոր մեր բանվորներից մեկի տանը ժողով է նշանակված, լես անմիջապես հալտնում եմ վոս-

տիկանապետին, և նշանակված ժամին ժողովատեղին շրջապատվում և և նրա կարգադրութեամբ բոլորը ձերբակալվում, բանտն են քշվում: Բայց նրանցից մեկը, ինչպես և պատահում, ճանապարհին փախչում ե...

ԳԵՎՈՐԳ.—Այդ մեկը լավ չե, Ստեփան, նա կարող ե մեզ մնասել: Հարկավոր և միջոցներ ձեռք առնել, նրան ել մյուսներին մոտ ուղարկել, և թող նրանք այնտեղ միմյանց քարոզեն «յեղբայրութուն», «միութուն», «ազատութուն», «սոցիալիզմ»... նրանց հոխորտանքից լես այլևս չեմ վախենում: Յես կարծում եմ, վոր գործադուլի հարցը արդեն լուծված ե. հա՛, հա՛, հա՛... գործադուլ, գործադուլ... ահա ձեզ գործադուլ...

ՍՏԵՓԱՆ.—Գնացի այն անպիտան Գիզոյի հետ ել խոսեցի, նա խոստացավ բանվորներին ապառիկ վոչինչ չտալ: Գևորգ Բաղդանիչ, գործը այսպես հաջող ընթացք ընդունելուց հետո կարելի չե վստահ ասել, վոր մենք հաղթութունը տարել ենք: Յես համոզված եմ, վոր վաղը մյուս որը բանվորները իրենք կգան և կխնդրեն:

ԳԵՎՈՐԳ.—Վոր գործը սկսեմ և գան աշխատե՛ն. վոչ, սիրելիս, դեռ վաղ ե, գործադուլը դեռ չերկար պիտի շարունակվի: Փողոցներում նրանք քիչ ել թող թափառեն, քիչ ել սոված-ծարավ գլուտան, մինչև վոր խելքի գան: Ինչպես հարկն և լես նրանց մինչև չճգմեմ, չընկճեմ, նրանք չեն խրատվի... Իսկ այնուհետև թող գան ընկներս վոտներս, խնդրեն, աղաչեն և եզ դեպքում միայն գործը կսկսեմ, բայց թե ի՛նչ պայմանով, այդ արդեն իմ գործս ե...

## ՏԵՍԻԼ 17.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳՐԻԳՈՐ.

ԳՐԻԳՈՐ.—Պատիվ ունեմ ներկայանալու, տեր և հավատարիմ ծառա...

(Հայացքը ուղղում ե Գաի Գեվորգի լեվ հետ Սեփաճի կողմը):

ԳԵՎՈՐԳ.—Ո՛վ ես. ի՛նչ ես ուզում:

ԳՐԻԳՈՐ.—Ձեր բանվորութեան կողմից ուղարկված ներկայացուցիչ եմ... Ընկերներս պահանջում են, վոր միջամտեք ուր հարկն ե, ազատել տաք մեր քանտարկված ընկերներին...

ԳԵՎՈՐԳ.—Պարոն ներկայացուցիչ, դուք եք, վոր իմ հրամաններս պիտի չենթարկվեք: Լսիր, քո ընկերներին ազատում

չկա: Դեռ ավելի խիստ միջոցների պիտի դիմեմ: Մինչև դուք բու-  
լորդ բանտ չուղարկվիք, դուք չեք խրատվի, լեզուներդ չեք կար-  
ճացնի:

Գրիգոր.— Բանտերով եք ուղում մեզ ընկճել, մեր միտքը,  
մեր լեզուն կաշկանդել: Վոզորմելիներ, դուք եք, վոր բանտի  
անունը լսելիս զողում, սարսափում եք, իսկ մենք նրանից սար-  
սափելու վոչինչ չունենք...

Գեվորգ.— Յերբ ձեզ այնտեղ կտանջեն, կաշիներդ կքեր-  
թեն, դուք կսարսափեք:

Գրիգոր.— Մեր կաշին ձեզ պես բարի մարդիկ վազուց են  
քերթել:

Գեվորգ.— Ձայնդ կտրիր. դու հասկանա՞մ ես՝ ինչ ե նշա-  
նակում տիրոջ դեմ հակառակվելը: Դու չգիտես, վոր բավական  
ե իմ մի ակնաբեկը, և դուք մտրակների տարափի տակ բանտը կը-  
քշվեք...

Գրիգոր.— Իսկ դուք չգիտե՞ք, վոր բավական ե մեր այս  
շրուտ բազուկների մի հարվածը, և բանտը կփլվի ձեր գլխին:

Գեվորգ.— Ստեփան, զնա հայտնիր վոստիկանությանը՝  
(Սեփաճը ուզում ե գճալ):

Գրիգոր.— Չհամարձակվես տեղից շարժվել...

Գեվորգ.— Ուրեմն դու չես ուզում քո կամքով հեռանալ,  
կորչել այստեղից...

Գրիգոր.— Իսկ դուք չեք ուզում հարգել մեր առաջարկը և  
լսել մեր ձայնը...

Գեվորգ.— Ավելի շուտ լես ձեր ձայնը կկտրեմ, քան կհար-  
պեմ...

Գրիգոր.— Տեսնենք ո՞վ ո՞ւմ ձայնն ե կտրում...

(Դառույճը բռնում ե ձեռքից յեվ հարձակվում ցախ  
Գեվորգի յեվ ապա Սեփաճի վրա):

Գեվորգ.— Ստեփան, վոստիկաններ կանչիր:

Գրիգոր.— Մեռելաթաղեր կանչեցեք...

(Յերկուսից ել սպանում ե յեվ ուզում ե դուրս գճալ,  
մտնում ե վահանը):

ՎԱՀԱՆ.— Սպասիր, լես լսեցի ձեր վորոշումը և շտապեցի  
դալ... (Նկատում ե Գեվորգի յեվ Սեփաճի սպանված լիճեղը):  
Դու այս Թնչ արիր, խելագար... Ինչ՞ե թունավորեցիր գաղափա-  
րը անմիտ վոճրադործությամբ:

ՎԱՐԱԳՈՒՅՐ.

### III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ.

Բեմը ներկայացնում է ներքնահարկ պանդոկ: Կամարաձև առաստաղ: Չորս անկյուններում դրված են հասարակ սեղաններ և աթոռներ: Ամենախուլ և մութ անկյունում Գարեգինը, Արշակը և Արրահամը նստած սեղանի շուրջը, մի շիշ գինի առաջները դրած՝ խորհրդակցում են:

#### ՏԵՍԻԼ 1.

ԳԱՐԵԳԻՆ, ԱՐՇԱԿ ՅԵՎ ԱԲՐԱՀԱՄ.

ԱԲՐԱՀԱՄ.—Նրանք շատ նեղ ու չքավոր դրության մեջ են... Նրանք որվա ուտելու հաց չունեն: Ելած-չելածները տարել-զրավ են դրել. ես պայմաններում գործադուլը շարունակել անկարելի չե... Ինձ թվում է, վոր մենք այդ գործադուլը չպետք է անելինք...

ԱՐՇԱԿ.—Քու կարծիքին չես համաձայն չեմ: Յեթե մենք եսոր գործադուլը շարունակելու հնարավորութունը չունենք, եդ գեռ չի նշանակում, վոր մենք գործադուլ չպետք է անելինք...

ԱԲՐ.—Իմ ասածը դուք չհասկացաք: Յես ասում եմ, վոր բանվորութունը նեղ ու թշվառ վիճակի մեջ է: Վոր նրանք սոցիալիստական գաղափարներով տարված և հեղափոխական հոգու տեր մարդիկ չեն: Քաղցն ու կարիքը ստիպում է նրանց բոլորովին հակառակը մտածել...

ԳԱՐԵԳԻՆ.—Քաղցն ու կարիքը մեզ համար անձանոթ չերևուլթ չի, եդ տեսակ նեղ ու թշվառ որեր մենք շատ ենք տեսել: Յեվ եդ նեղ ու թշվառ որերն են, վոր մեզ հարկադրում են գործադուլի դիմելու...

ԱԲՐ.—Վոր բանվորութունը գործադուլը շարունակելու հնարավորութուն չունի, դուք դրա դեմ չեք հակառակում, ուրեմն ինձ մնում է միայն մի հարց տալ: Վերջապես գործադուլի

դիմ արտահայտվող բանվորների արտունջն ու դժգոհութիւնը  
դուք հաշվի պիտի առնէք, թե չե... (Սիմոնը մտնում է յեվ գզու-  
-տուքյամբ ուզում է մոտեցնալ յեվ ցրաց խոսակցութիւնը լսել,  
բայց ցրացի իսկույն ցկատում է: Սիմոնը իրեմ գիտամբ հար-  
բած է ձեզացնում):

## Տ Ե Ս Ի Լ 2.

### ՆՈՒՆՅՔ ՅԵՎ ՍԻՄՈՆ.

ԱՐՇԱԿ.— Զգուշացեք, մեզ լսող կա... Սիմոն, ինչի՞ համար ես  
մեղտեղ կանգնել, (Սիմոնը լուռ է) գուցե գինի խմել ես ուզում.  
արի ես մի բաժակը վերցրու խմիր, եղ փակ լեզուդ իսկույն կը-  
լացվի: Ասում են, վոր գինին զորավոր հասկութիւն ունի, քո-  
սին աչք ա տալիս, չորախին վոտք, աղքատին՝ հարստութիւն,  
մունջին՝ լեզու:

ՍԻՄՈՆ.— Յես վոչ քոռ եմ, վոչ ել չորախ...

ԱՐՇԱԿ.— Նշանակում ե, դու են վերջին տեսակիցն ես, վոր  
չեթե մի բաժակ գինի խմես, են բոպելին ըլլուլ կդառնաս:

ՍԻՄՈՆ.— Բլրուլ կդառնամ, թե ազաւլ, եղ ձեր գործը չի...  
Դուք իմ հարցին պատասխանեք...

ԱԲՐ.— Հմբց...

ԳԱՐԵԳԻՆ.— Ի՞նչ հարց...

ԱՐՇԱԿ.— Յես քեզ լսում եմ:

ՍԻՄՈՆ.— Գործադուլը չե՞րբ կվերջանա:

ԱՐՇԱԿ.— Եղ հարցի պատասխանը ինչո՞ւ անպատճառ մեղ-  
նից ես պահանջում... քնա դիմիր Գեորգ Բաղդանիչին, քո տված  
հարցի պատասխանը թող նա տա...

ԱԲՐ.— Գործարանի տերը չե՞ վոր նա լի:

ՍԻՄՈՆ.— Գործարանի տերը, ճիշտ ա, նա լա, բայց կարգա-  
դրութիւնը մենք ձեզնից ենք սպասում: Կապլիմեստրի նման,  
դուք ձեր մատը վոր կողմը շարժում եք, մեր բանվորութիւնը  
են կողմն ա թնջվում: Նրանք ձեր հրամանին են սպասում: Դուք  
վոր հրամայեք, նրանք առանց մի խոսք ասելու գլուխները քոշ  
կգնան ու կաշխատեն: Նրանք ձեզ են մտիկ տալի... ձեր կար-  
գադրութիւնն են սպասում:

ԱՐՇԱԿ.— Զեզ սլ ա եղպես հասկացրել:

ՍԻՄՈՆ.— Ով պտի հասկացնի, մենք չենք հասկանում, մենք

խելք չունենք... դու արխային կաց, ենքան ել մենք հիմար չենք, վոր չհասկանանք. ձեր մասին մենք ամեն ինչ գիտենք, վոր դուք հեղափոխականներ եք, վոր դուք պրոպագանդիստներ եք, վոր դուք հստեղ գիտի խմելու համար չեք եկել, եղ ել գիտենք:

ԱՐՇԱԿ.— Լավ ես սկսել, շարունակիր...

ՍԻՄՈՆ.— Իհարկե կշարունակեմ, կարծում եք լես ձեզնից կվախենամ, սկի լել չեմ վախենա. դուք ինձնից վախեցեք, վոր մի ձեռն տամ թե չե, տասը գարադավոյ ներս կթափվի. նրանք ճրագով են ման գալի ձեզպեսներին:

ԱՐՇԱԿ.— Հետո, հետո...

ՍԻՄՈՆ.— Հետո են, վոր դուք անխիղճ ու անաստված մարդիկ եք, վոր դուք բանվորներին ամենախայտառակ կերպով խարում եք, վոր դուք մեզ համար բոլորովին չեք մտածում. ձեր արած զարաստովկեն մեր տունը քանդեց, ունքը շինելու տեղ դուք մեր աչքը հանեցիք... հաց տալու տեղ դուք մեզ հացից ցրկեցիք...

ԱՐՇԱԿ.— Պետք է ասած, վոր լավ ես ճառում, բայց հետաքրքրի ե իմանալ՝ եղ խոսքերի համար Գևորգ Բաղդանիչից ի՞նչ քան փող ես ստացել...

ՍԻՄՈՆ.— Գևորգ Բաղդանիչը եղ տեսակ բաների համար չեթե փող տալու լինի, դու լել կստանալիր:

ԱՐՇԱԿ.— Դու դուր ես կարծում, վոր ամեն մարդ կհամաձայնվի: Գևորգ Բաղդանիչի լրտեսը լինելու:

ՍԻՄՈՆ.— Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել:

ԱՐՇԱԿ.— Յես ուզում եմ ասել, վոր դու ծախված մարդ ես, վոր Գևորգ Բաղդանիչը քեզ պես ախմախներին կարողացել է խաբել, իր ձեռքին կույր գործիք դարձնել, և եսոր դուք անգիտակցաբար նրան եք լենթարկվում, նրա հրամանները, նրա թելադրանքները կատարում...

ԳԱՐԵԳԻՆ.— Տո վողորմելի, դու հասկանում ես, թե ինչ ես ասում:

ԱՐՇԱԿ.— Գիտեմ, թե ուր ես գլորվել... Դավաճան չուզեմ...

ՍԻՄՈՆ.— Ե՛, լիս...

ԱՐՇԱԿ.— Լուիր, արդարանալ դու չես կարող, քո մասին մենք ամեն ինչ գիտենք. վոր դու հարբած չես և դիտամար հարբած ես ձևանում, այդ ևս գիտենք: Լուիր, դու պետք է ամեն ինչ խոստովանվես, հակառակ դեպքում լես քեզ կխեղդեմ, կըս-

պանեմ, սրիկա... (Հարձակվում ե Սիմոնի վրա, Աբրահամը արգելում է, իսկ Սիմոնը ոգտվելով հանգամանքից, գուրս է վազում):

### Տ Ե Ս Ի Լ 3.

ԱՐՇԱԿ, ԳԱՐԵԳԻՆ, ԱԲՐԱՀԱՄ.

ԱԲՐԱՀԱՄ.—Սպասիր, ի՞նչ ես ուզում անել, խարված ու մոլորված բանվորի հետ եղ լեզվով չե՞ն խոսում...

ԱՐՇԱԿ.—Խաբված ու մոլորված բանվորին համոզելու համար գործ դրած բոլոր միջոցները սպառելուց հետո մեզ մնում է մի բան. խփել և շանսատակ անել... այո, մեր ընդհանուր գործին ֆուսս բերող լրտեսներն ու մատնիչները մեր շարքերում չպետք է լինեն...

(Գրիգորը օտայմանում է յեվ առանց մի բան արտասանելու կանգնում յեվ ապեած նայում):

### Տ Ե Ս Ի Լ 4.

ԱԲՐԱՀԱՄ.—Գրիգոր...

(Խորհրդավոր նայում են իրար):

ԳԱՐԵԳԻՆ.—Գրիգոր...

ԱՐՇԱԿ.—Ի՞նչ արիր...

ԳՐԻԳՈՐ.—Վերջացրի...

ԱԲՐԱՀԱՄ.—Վձրին:

ԳՐԻԳՈՐ.—Յերկուսին ել միտտեղ...

ԱՐՇԱԿ.—Քեզ հետեկիս կլինեն, քո հստեղ մնալը վտանգավոր ա, գնա:

ԳԱՐԵԳԻՆ.—Ճիշտ ա ասում, դու գնա, մենք ել քիչ հետո դուրս կգանք... (Գրիգորը գնում է):

### Տ Ե Ս Ի Լ 5.

ՆՈՒՅՆՔ, ԹԱԹՈՍ, ՄԱԹՈՍ ՅԵՎ ԽԵԶՈՒ.

ԹԱԹՈՍ.—Յես վոր մի որ գինի-արաղ չխմեմ, են որը ինձ համար որ չի Դուք կարծում եք, յես չեմ հասկանում, վոր խմելը ֆուսսակար բան Է... Յես լավ եմ հասկանում և դրա համար ել յես



շատ անգամ ուղիւ եմ խմելը թարզ անեմ, ու քանի անգամ մըտ-  
քունս դրել եմ, վոր ես փողոցով սկի չանցնեմ, շիրաջ Գիգուլի լե-  
րեսը բոլորովին չտեսնեմ, չի ըլում: Եդ զահրումար գինու արկ-  
ճորն ու արաղի բռնկեքը, ախպեր, ընենց մի զորութիւն ունեն, Վոր ուր վոր ել գնամ, ինձ քաշում դեսն են բերում...

ՄԱԹՈՍ.— Եդ արագն ու գինին, վոր տեղովը մի թուչն ել  
դառնա ու թունավորի, մարդ հենց ուզում ա վոր մի գլուխ խմի:  
Դրա թարզ անելը դժվար ա, շատ դժվար...

ԽԵՉՈ.— Ավետարանի մեջ գրված ա, վոր գինին Գրիստոսի  
արլունն ա, արաղը՝ Պիղատոսի արտասուքը, վոր եդ սուրը գրքի  
ասածները ճիշտ ա, չես դրանում չեմ կասկածում: Չունքի վոր  
վոչ ավետարանը սուտ կխոսի, վոչ տերտերն ու տիրացուն:  
Դրա համար ել գինի, արաղ խմելը թարզ անել, եդ միևնույն ա, թե  
մարդ իր հավատը ուրանա... իր կրոնը մոռանա...

ԹԱԹՈՍ.— Եդ որհնած գինու, արաղի հոտը խունկ ու մոմից  
գորավոր ա: Նրա հոտը ում քթին վոր դիպչում ա, նրա խմելու  
ախորժակը գրգռվում ա, իսկ ախորժակը գրգռվելուց հետո հավատս  
ել կուրանամ, մասսաբա ել... Յես հմի ձեզ հարց եմ տալիս. խմե-  
լը դուք Թնչ եք հասկանում:

ԽԵՉՈՆ.— Խմելը՝ չես խմել եմ հասկանում:

ԹԱԹՈՍ.— Չե, դու չհասկացար:

ՄԱԹՈՍ.— Խմելը՝ չես լակել եմ հասկանում:

ԹԱԹՈՍ.— Ըղորմի հորդ, դու լավ ես հասկացել. (տեսչոյից)  
իսկ ինչ վերաբերում ա, վոր դու ասում ես ավետարանումը գրած  
ա, թե գինին Գրիստոսի արլունն ա, արաղը Պիղատոսի արտա-  
սուքը, դրանք դիպի դատարկ, մոգոնած բաներ են. ավետարանն  
ել ա մեզ խաբում, տերտերն ու տիրացուն ել...

ՄԱԹՈՍ.— Յես իմ աստոծը դրուստ ա ասում:

ԹԱԹՈՍ.— Յես ընենց գիտեմ, վոր լեթե դուք եդ գինին ու  
արաղը Գրիստոսի արլան ու Պիղատոսի արտասուքի տեղ խմեք,  
Գրիստոսի աղոթած եշի նման անգաջներդ քաշ կանեք ու տեղ-  
ներումդ սուտ ու փուս գինջ կնստեք: Իսկ լեթե եդ գինին ու  
արաղը հենց գինի ու արաղի տեղ կխմեք, ասլան կդառնաք ու  
ամեն ինչ կտաք կջարդեք: Դե խմեք...

(Յերեմով ծիծաղում եմ յեկ սեղանից խփում):

## Տ Ե Ս Ի Լ 6.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՐՏՈ.

ԱՐՏՈ.— Ի՞նչ եք հրամայում:

ԹԱԹՈՍ.— Ներողութիւն, մենք խաղելին չենք, վոր հրամայենք, մենք խնդրում ենք, վոր դու գնաս եղ քու հալալ ձեռքովը երկու խելադա կախիթու գինի լցնես ու բերես մեզ համար: ՄԱԹՈՍ.— Յերկու շամփուր ել խորոված:

ԽԵՉՈ.— Հաց ու պանիր, կանաչ խիարներն ել հետը:

ԱՐՏՈ.— Ես նմուտիս... (գնում է):

ԹԱԹՈՍ.— Իմ պալուշկաս ես անգամ պոխի դուրս եկալ. միքանի մանեթի գլխին ետեղ քար կգցեմ, իսկ մնացածը դակապելկա կտանեմ կնկաս կտամ, թող նա լիլ քիչ ուրախանա ու տանի, երևիեքանց համար ինչ հարկավոր ա, առնի:

## Տ Ե Ս Ի Լ 7.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳԻԳՈՂԻ.

ԳԻԳՈՂԻ.— (Շեմֆուս) Արտո ջան, հենց ապրես, դուքնի ադաքն ավլե ու մե խաղաթին ջրե, շաբաթ որ ե, գնացող-եկող շատ կուլի, իս մե տհնեմ սրանք ետտի լ՛նչ են անում... անիծածները խմելու համար հո՛ չեն զալի, գինին մահանա լե, ուրիշ վունչիչ. ուլ ե իմանում ինչ սովես ին անում... Վ՛րնց կամաց ին խոսում... (Մոտեցում է լեվ խորագեցից ցայում):

ԱՐՏԱՀԱՄ.— Ա՛, Գիգոլի, բարև:

ԳԻԳՈՂԻ.— Վահ, Աբրամ, դուն լ՛ս, վահ, Արշակ, Գարեգլ՛ն, վահ, իս ձիւր հոգուն մատաղ, դե ասեք տհնեմ՝ վ՛րնց իք, վ՛րնց:

ԱՐՇԱԿ.— Ես բաժակը վերցրու խմի:

(Գիգոլ լիք բաժակը օալիս է Գիգոլուն):

ԳԻԳՈՂԻ.— Ես աստուծ կինք տա մեր դուշմնին, վուր մեր լավը տհնում է, աչքն է քոռանում, ուզում է թե մոտ գա մնասի, ծնգներն են թիլանում. հեովից կանգնած մտիկ ե անում, աղի պես հալվում է, մոմի պես վառվում... (խմում է):

ԱՐՏԱՀԱՄ.— Անուշ, անուշ...

ԳԻԳՈՂԻ.— Անուշ կենաք... Գիտե՛ք ինչ կա. առանց դուշմնի մարդը մե գրող չաժե: Դուշման թե կունենաք, ձեր գուրծին դուք մուղալիթ կուլիք:

ԱՅՐԱՀԱՄ.— Գիգոլին ճիշտ է ասում, վերցրեք եքստրա սրա կենացը խմենք:

(Խմում է հե):

Գիգոլի.— Շնորհակալ լեմ, սաղ ըլեք, ուրախ ըլեք, համաշա ըսենց կամպանիով քեֆ անեք...

ԱՐՇԱԿ.— Գիգոլի ջան, ներողութուն կանես, վոր քիչ ուշանում ենք...

Գիգոլի.— Հաջաթ չե, դուք շախով կացեք. դուքանս ձիդ պես տղերքանց համա փեղքաշ է, թեկուզ սաղ որով նստիք, ձեզ ճիլ է բան ասում. բայց ել վճար որվա համար ենք եստի ննգած, վոր մեկս մեկու քոմագ չանինք...

(Գարեգիքը, Արտակը յեվ Արտահամը գնում են):

Կորեք, կորեք, սարսաղ մունդուկներ. իս ձիդ լավ եմ ճանչնում, գիտիմ ինչ պտուղներն իք, ձիդ տուն թողնելու չե. համա ինչ արած, չարա չկա, դովրանը ձիրն ե...

ԹԱԹՈՍ.— Գիգոլի, տես Արտոն ի՞նչ ելավ, ճեր մնաց:

Գիգոլի.— Ես նմուտիս. Արտո, ջալդ արա (գուրս է գնում յեվ Արտոյի հետ նորից գալիս):

## Տ Ե Ս Ի Լ 8.

ՆՈՒՅՆՔ, ԱՐՏՈ ՅԵՎ ԳԻԳՈԼԻ.

(Արտոն յերկու խելագով գիցի, հաց, պանիր, կանաչի, բալակներ յեվ աղն բերում է, զարում յեվ գնում):

ՄԱԹՈՍ.— Արտո, ճեր մնացիր, դե բեր ե...

ԹԱԹՈՍ.— Դե վերցրեք, վերցրեք չորացած բողագներս մի թրջենք... (Խմում է հե):

(Ներսից աղմուկ):

ՄԱԹՈՍ.— Ես ի՞նչ դալմադալ ա, Գիգոլի:

Գիգոլի.— Գևորգ Բաղդանիչի զարաստովկա արած բանվորներն են:

ԽԵՉՈ.— Բա ձեզ մոտ ինչի՞ համար են եկել, ի՞նչ են ուղում:

Գիգոլի.— Աստուծ վուչ գիտե նրանց պուլին ու աբիվը, դրանք իրանց զարաստովկով զահլա տարան: Դրանց բանը, ախպեր, խիստ մազալու լի: Դրանք քանի զարաստովկա չելին արել, մինձ-մինձ ելին խոսում. ալ մենք ես կոնենք, ալ են կոնենք, ալ

եսենց կոնենք, ալ եսենց շուռ կուտանք, կեննց կոնենք, մե խոսքով մինձ պլաննիր ելին քաշում, համա վիրջը փուտա դուրս եկավ... Վուչինչ չկարացին անել, ու հիմի երեկվան ասլանները հսոր քաղցած գլխաներ են դառել ու ոռնում ին... (Քարոս ու Մարոսը ծիծաղում են):

ԽԵՉՈ.—Ի՞նչ եք ծիծաղում, ինձ թվում է, վոր եստեղ ծիծաղելու վոչինչ չկա: Մենք ել բանվորներ ենք, եդ ուղտը իր ծուռը մեջքով մի որ ել մեր դռանը կշոքի... Հետո, հետո, դուքու խոսքը շարունակի:

ԳԻԳՈՂԻ.—Հետո ինչ. Գևորգ Բաղդանիչի այնուամն ել չի. դաբաստովկեն թեկուզ մե տարի լել շարունակվի: Նա իր փուրը կշտացրիլ է, իրան տաք տիղղումը նստել. վաչն եկել սրանց է տարել, վուր տանը ուտելու մե կտոր հաց չուենն: Ամեն որ գալիս են միզ մոտ գլուխներս տանում. մեկը չայ, մեկելը պանիր, մեկը չիս գիդի ինչ... ալ հրեա եկան... (Գիգոլից գնում է):

## Տ Ե Ս Ի Լ Թ.

ՆՈՒՅՆՔ, ԳԻԳՈՂԻ, ՇԱՔՐՈ ՅԵՎ ՄԻ ԽՈՒՄԲ ԲԱՆՎՈՐՆԵՐ.

ԳԻԳՈՂԻ.—Շատ նհախ արիք, մի եր ձեր գլուխը կտորում. տեհնում իք ջիբներդ բորոջ չկա. տանը ուտելու հաց չունիք, ի՞նչ իք փիքը անում ու զաբաստովկա անում... Վուր արել եք, զնացեք քաշեք, համը լավ տեհեք, վուր ել ուրիշ գամ եդ թավուր տուտուց բանիր չանիք... Վուր մող եք ըլում եստի, ի՞նչ իք փիքը անում, դուքանս վուր լիքն է, գանա դիփ իմն Բ... Մն չայլը, շաքարը, հացը, պանիրը, միսը, նավթը, գինին, արաղը, իս վուր ձիզ նիսիա բաժնիմ, իժում տիրուչը ի՞նչ շուղար տամ... Չե, ախպեր, չիմ կանա. թավաթ զարար իմ անում:

ՇԱՔՐՈ.—Մենք ձեզնից վողորմություն չենք ուզում, ես քանի որն է, լերևի շուտով գործը կսկսվի, կգնանք, կաշխատենք և մեր պարտը կտանք...

ԲՈՂՈՐԸ.—Իհարկե կտանք, իհարկե կտանք...

ԳԻԳՈՂԻ.—Գանա չիմ գիդի. համա որեսի դենը ել ոչովի նիսիա չիմ տալի, թեկուզ աստուծը ինքը դիվիր գա. թե մարդ եք, իմացեք: Ան թե չե, եստի դուքնի տեր մենակ հո իս չիմ, շատերը կան: Ինչի՞ նրանցմեն չիք ուզում...

ԲՈՂՈՐԸ.—Ուզում ենք, վոր չեն տալիս...

ԳԻԳՈՂԻ.—Նրանք վուր չին տալիս, իս թնչի տամ... Հուզ-  
րումը ձեր խաղելինի մոտ փխամարդ դուս գամ... Ձե, ախպեր,  
գիդի՞ք ինչ կա, քան թե ինձմեն իք խնդրում, ուփրո լավ  
կուլի, վուր գնաք ձեր խաղելինին մե բերան խնդրեք, թող գա-  
վողը բաց անի, գնացեք նստեք բանեք, համ ձիգ համա լավ  
կուլի, համ իր համա, համ ել ինձ համա...

## Տ Ե Ս Ի Լ 10.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԱՀԱԿ.

(Սահակը օտապ-օտապ մտնում է):

ՍԱՀԱԿ.—Ի՞նչ եք հավաքվել, մի դուրս լեկեք տեսեք, ինչ  
խարար ե՞... վա՛յ մեզ, վա՛յ մեզ...

ԲՈՂՈՐԸ.—Ի՞նչ կա, թնչ ա պատահել...

ՍԱՀԱԿ.—Գևորգ Բաղդանիչին և գործարանի կառավարչին  
սպանել են...

(Ամեհեքը զարմացած իրար յերես եմ նայում):

ԲՈՂՈՐԸ.—Ի՞նչ ես ասում, եղ թվ ա սպանել...

ՍԱՀԱԿ.—Սպանողը հայտնի չի, դրա համար դեռևս քննու-  
թյուն ա կատարվում... Ամբողջ քաղաքը դրանց սպանության  
մասին ա խոսում:

ԲՈՂՈՐԸ.—Գնանք, գնանք իմանանք...

(Բանվորները գնում են):

ԳԻԳՈՂԻ.—Դե արի ու նիսիա բաժնե...

## Տ Ե Ս Ի Լ 11.

ԳԻԳՈՂԻ, ԹԱԹՈՍ, ՄԱԹՈՍ ՅԵՎ ԽԵՁՈ.

ԳԻԳՈՂԻ.—Հո տեհնում իք, թե դուք ել զաբաստովկա ա-  
նեք, եղ որը կուննգնիք... Ջաբաստովկեն, դրուստ ե, լավ բան ե,  
մագրամ ձիգ համա չե...

ԹԱԹՈՍ.—Խելքը գլխին մարդը զաբաստովկի համար չի  
լել մտածի: Արտոլին մի ձեն տուր, ասա մեզ համար երկու պորցի  
խորոված և մի խելադա լել գինի: (Գիգուլին օհմֆից բարձրա-  
նայն):

ԳԻԳՈՂԻ.—Արտո, երկու պորցի խորոված ու մե խելադա

յել գինի, ջալդ արա: Իս ասիլ իմ ու ելի ասում իմ, զարաստով-  
կեն լավ բան ե, համա ձիգ համա չե...

**ՄԱԹՈՍ.**—Ձարաստովկա անողն իր տանը ալլուրի ամբար  
պտի ունենա, վոր հացը թխի ու մի կողմից նստի ուտի, մինչև  
վոր խաղելինի համբերութլունը հատնի, զա քեզ կանչի, վեր  
կենաս ու գնաս...

**ԳԻԳՈՂԻ.**—Ողորմի հորդ, դու լավ ասիր. ըզնաչիտ զարաս-  
տովկեն փռնչուն կուսազե... (Բալորը ծիծաղում եմ):

**ԹԱԹՈՍ.**—Ինչի՞ մենակ փռնչուն. գինի ծախողին ել լավ  
կսազի. գինու սկճորի կողքին նստես, նառչարարով խոզի խո-  
րովածը դնես առաջդ, մի կողմից ուտես, մի կողմից խմես, վոր  
խաղելի՞նը զա կանչի լել, չգնաս... (ծիծաղում եմ):

**ԳԻԳՈՂԻ.**—Դու ուփրո լավ ասիր... հա, հա, հա...

(Դուրս ե գնում):

(Մտռն խորովածը յեվ գինից բերում ե յեվ ժապ գնում:  
Մարբան ցցցոսիների մեջ, ժալը գլխից մեցում ե յեվ մի աճ-  
կյուցում լուռ նայում):

## Տ Ե Ս Ի Լ 12.

### ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՄԱՐԹԱ.

**ԹԱԹՈՍ.**—Խորովածը վոր յեկավ, խոսալը թողեք: Գևորդ  
Բաղդանիչի բանվորները վոր զարաստովկա անեն, ձեզ ինչ. վոր  
նրան խփեն սպանեն, ինձ ինչ. լավ մարդ ա, թող չսպանվի...  
Ամեն մարդ թող իր համար մտածի, իր մեռլի համար լաց ըլի:  
Դուք ձեր առաջը մտիկ տվեք, տաք-տաք խորոված, կարմիր գի-  
նի, կերեք, խմեք, քեֆ արեք, դուշմանի աչքը հանեք...

**ՄԱՐԹԱ.**—Առաջ քու աչքը հանեմ, հետո սրանցը, ալ մարդ,  
դու չես ամաչո՞ւմ, գետինը չես մտնո՞ւմ. երեխեքդ սոված-ծա-  
րավ գցել ես տուն, իսկ դու եստեղ նստել խորոված ես ուտում,  
գինի տրաքվո՞ւմ... ալ հարամ ըլի, քնթովդ դուրս գա... Յարաբ  
վճնց ա եղ թիքեքը բողազովդ կուլ գնում, ինչի՞ հզ թիքեքը ոս-  
կոռ չի դառնում, բգիդ մնում:

**ԹԱԹՈՍ.**—Ա կնիկ, դե բոլա, քաշվի գլխիցս, կորի ուղ ըլի-  
սրանց մոտ դու ինձ արիժատ ես անում, ամոթ ա:

**ՄԱՐԹԱ.**—Ձենդ կտրի, ամոթ նա լա, վոր մեզ տանն ա-  
ռանց հացի լես թողնում, իսկ դու եստեղ գինի տրաքվում:  
Անխիդձ, անաստված, աչքս ջուր ա կտրում սաղ շարաթ սպասե-

լով, վոր միքանի մանեթ փող կատանաս, կբերես, կտանք մեր ցավին, մեր դարդին... Իսկ դու ստանում ես ու բերում պազվալներում քո ու փուչ անում... Այ քանդվի, բրիշակ դառնա, վոր ձեր արուն-քրտինքով ձեռք բերած աշխատանքը չբերեք ածեք ես քանդվածը, ես բարբաթը...

ԹԱԹՈՍ.— Ա կնիկ, դե բոլ ա, սրանց կշտին դու ինձ թամամ ասկարբիտ արիր...

ՄԱՐԹԱ.— Քու աչքն ել դուրս գա, սրանցն ել: Մի բարի պտուղներ ել սրանք չեն: Հոգս սրանց գլխին: Սրանք վոր նամուսով-արուսով մարդիկ ըլին, չեն գա ընկնի ես միկիտանխանեքը. տուն չունե՞ն, ցավ չունե՞ն, թե՞ դարդ չունեն... Վեր կաց գնանք...

ԹԱԹՈՍ.— Լավ, դու գնա, լես հետո կգամ:

ՄԱՐԹԱ.— Յես քեզ ասում եմ վեր կաց, թե չե, ես խելադեն գլխովդ եկավ... (Խելագեճ բարձրացնում է, Թաթոսը ձեռից խլում է)

ԹԱԹՈՍ.— Գիժ ամ ես մունդոսիկը...

ՄԱՐԹԱ.— Գիժ ել ես ու բնեդիան ել ես, հողեմ գլուխդ, վեր կաց քեզ ասում եմ...

ԹԱԹՈՍ.— Վարտեղից եկավ ես սատանեն... Տո չես թողնելու փսոնս ելա տամ...

ՄԱՐԹԱ.— Ձենդ կտրի, թե չե աշխարհը գլխիդ չլմթնացնեմ. թնչ իրավունքով դու իմ երեխանց ուղղը փսոնի պեսք ե տաս, քոռանաս դու, վոր խմելու համար եդքան գլուխդ կորցրել ես, ել վոչ տուն ես ճանաչում, վոչ կնիկ և վոչ երեխա (Բաճեում է) վեր կաց, վեր կաց:

ԹԱԹՈՍ.— Տղերք, իմ փսոնս ել տվեք:

(Մարթա լիվ Թաթոս գուրս են գնում):

ՄԱԹՈՍ.— Համադա կնիկ ա համ, մեզ լավ խալտառակեց, եդ թուք ու մուրը մինչև հավիտյան մեզ բոլ ա. վեր կաց, մենք ել գնանք, քանի մեր կնանիքն ել չեն եկել և մեզ դռով տարել...

ԽԵՉՈ.— Գնանք, ախպեր, ես կնիկ-արմատներից ամեն ինչ սպասելու լա: (Խեչոն լիվ Մարթաը իրար ուսերից բռնած գուրս են գնում):

ՔԱՂԱՔԱՊԱՀ ՅԵՎ ԳԻԳՈՂԻ.

ՔԱՂԱՔԱՊԱՀ.—(ՄճճՈՒՄ Ե ԽՈՐԱԳՆՆԻՑ ՃԱՅՈՒՄ) ՎճՅՎՈՐ  
չի լերևում:

ԳԻԳՈՂԻ.—Ո՛ւմն իս ուզում, ի՞նչի համար իս ման գալիս:

ՔԱՂԱՔ.—Քեզ մոտ կասկածելի մարդ չի մտել:

ԳԻԳՈՂԻ.—Կասկածելի մարդը գալիս ե իմ կուշտը ի՞նչ  
զլուխը քարովը տա: Կասկածելի մարդկանց իս ինքս իմ դուրս  
անում... (ՇԵՄՔԻՑ) Արտո, սրան մի կես տրիցատկա խմեցրու,  
ճամփու դիր... Դե գնա, ել մի ուշանա...

(ՔԱՊԱՔԱՊԱՅԻՑ ԳՆԱՎԱՐԻ Ե ՂՅՈՒՄ: ՄճճՈՒՄ ԵՑ  
ԽԱՎԻ ԲԵՐՈՂ ԵՎ ԿԱՔԱ ԲԵՐՈՂ ԲԱՅՎՈՐՅԵՐ):

Տ Ե Ս Ի Լ 14.

ԳԻԳՈՂԻ ԽԱՎԻ, ԲԵՐՈՂ ՅԵՎ ԿԱՔԱՍԱ ԲԵՐՈՂ.

ԽԱՎԻ ԲԵՐ.—Գիզու ջան, երեխքս երկու որ ա նշխարը  
չեն դրել բերանները, առ ես խալին վերցրու, մի բան տուր տա-  
նեմ, երեխքս ուտեն... (ԳԻԳՈՂԻՑ ՃԱՅՈՒՄ Ե ԽԱՎՈՒՑ): Առ լավ  
մտիկ արա (փռում ե գեճի վրա):

ԳԻԳՈՂԻ.—Տեհնում իմ, Հասան խանի դովրի մնացած բան  
ե... Եհ, ինչ վուր ե, գինը ասա, համա թանգ չասես, թե չե չիմ  
վիկալի:

ԽԱՎԻ ԲԵՐ.—Թանգ կամ եթան ասելու ի՞նչ կա, լես ծախե-  
լու նպատակով չեմ բերել: Ուրիշներին իրանց հորից կամ պապից  
ահագին հարստութուն, տուն, տեղ, բաղ ու բաղչա ա ժառան-  
գութուն մնում, ինձ ել ես մի հատ խալին ա մնացել, են ել լի-  
բեխանցս տակից հանել ու բերել եմ...

ԳԻԳՈՂԻ.—Դե լավ, տար տու Արտուին ու նրան ասա, թող  
հինգ գրվանքա հաց տա, մե գրվանքա պանիր, կես գրվանքա  
շաքար, մե ասմուշկա չալ, մե գրվանքա լել նավթ:

ԽԱՎԻ ԲԵՐ.—Քիչ ա, Գիզու:

ԳԻԳՈՂԻ.—Քիչ չի, կուզես երկու գրվանքա լել միս ավել-  
ցնեմ:



ԽԱԼԻ ԲԵՐ.—Միսը թող հարուստները ուտեն. մենք բան-  
վոր ու չքավոր մարդիկ ենք, ցամաք հացով մթնումը առանց  
ճրագի չեմ լող կգնանք. մսի ու նավթի տեղ ասա թող հաց ա-  
վելացնի:

ԳԻԳՈՂԻ.—Դե լավ, գնա ասա, թող հաց ավելցնե...

(Խալի բերողը գուրս է գնում, իսկ կաքսա բերողը ա-  
ռաջ է գալիս):

Հա, դուն ի՞նչ իս ուզում, ես դոռադան ինչի՞ համար իս բե-  
րի. տար կորցրու, լես եստի ախպի լաշչիկ չունիմ...

ԿԱԹՍԱ ԲԵՐ.—Գիգոլ ջան, ինչ վոր ա, սա լա, իմ տնում  
սրանից լավ բան չի մնացել... Երեխեքս քանի որ ա հաց չեն կե-  
րել... Ելած-չելածներս տարել, վորը ծախել, վորը գրավ ենք դրել.  
հույս ունեցի՞նք, վոր ետոր-եզուց զավողը կբացվի, կգնանք կբա-  
նենք... Ոսպելի՞նին սպանելուց հետո զավողն ել կկողպվի, տուն-  
ներս ել իստակ կքանդվի... Մեր զավողի բժշկին հո ճանա-  
չում ես:

ԳԻԳՈՂԻ.—Վուց չե. նա իմ հարևանն է. չլինի Գևորգ Բաղ-  
դանիչին նա լե սպանել:

ԿԱԹՍԱ ԲԵՐ.—Սպանելն են ա, վոր Գևորգ Բաղդանիչի ազ-  
ջրկան նա ուզում ա՛ չեն տալիս, նա լել ջիգրու Գևորգ Բաղդա-  
նիչին սպանում ա:

ԳԻԳՈՂԻ.—Վուր աղջկան զոռով տանի՞, այ քեզ մազալու  
բան, եդ մուսղոսեկը ադա Մամադ խանը հո չե, վուր զոռով աղ-  
ջիկ է ուզում փախցնի: Յեքա պատվական, արբադոջի մարդ է,  
եդ հանգի բանը նա վճնց է լայեղ անում: Դե արի ու նիսիա  
բաժնե. չե, ախպեր, նիսիի տված խերը իս չուզեցի, գնա քու գլխի  
չարեն տիս, ել որեսի դենը նիսիա չիմ տալի. մինչև լի որս ել  
վուր տալիս ելի, զավողի խաթրու ելի տալի. զավողը վուր կողպ-  
վում է, իմ նիսիեն ել ճամնից ուզիմ, աստոծ գիտենա, ձեր զա-  
բաստովից ենդադա ձեր խազելինը գարար չարից, ինչդադա իս:  
Դե, ինչ իս կանգնե, գնա:

ԿԱԹՍԱ ԲԵՐ.—Դատարկ ձեռքով լես ձեր գնամ, երեխեքս  
սոված-ծարավ ինձ են սպասում, գնամ նրանց ի՞նչ ասեմ, ի՞նչ  
ջուղաբ տամ: (Լաց է լինում):

ԳԻԳՈՂԻ.—Դե լավ, լեքա մարդ իս, ի՞նչ իս լաց ըլում, տար  
Արտոլին ասա, թող երկու գրվանքա հաց տա, մի չետվեր պանիր:  
Դե գնա քեփ արա... (կաքսա բերողը գնում է):

ԳԻԳՈՒԻ, ԳԱՐԵԳՐՆ ՅԵՎ ԱՐՇԱԿ.

ԱՐՇԱԿ.—Գիգոյ, մեզ հարցնող չի լեղճի, մեր գործարանի բժիշկը պիտի գար:

(Նստում եմ իրեց ց ճախկից սեղում),

ԳԻԳՈՒԻ.—Դուք եղ բժշկին շատ ելիք դովում, քիչ առաջ գալիք, տենալիք նրա համար ինչ ելին ասում:

ԳԱՐԵԳՐՆ.—Նրա համար շատ մարդ շատ բան կարող ես ասել, իսկ դուք ամեն մի ասածի պիտի հավատածք:

ԳԻԳՈՒԻ.—Ինչի չիմ ավտա, թե կի ասում ին: Գիտիք ինչ կամ, իս ձիգ դրուստը կոսիմ. ձեր բժշկին իս լավ իմ ճանչում. նրամեն ամեն բան ավտալու չի: Դիփ դրանց մեղն ե, վուր աշխարհը եսենց խարար ելավ: Գնում ուսում ին առնում, խելոքանալու մագիեր ուփրո գժվում ին ու գալիս ին ետի, մինք սոցիալ ինք, կոսե: Ել աստուծ, խեչ, սրբութի չկա: Ել մինձ, պատիկ, աղա, նոքար, պրիկաշիկ, դվոունիկ, չինոֆիկ, տերտեր, տիրացու, վարդապետ չընեն՝ կոսե, ու ես թավուր հազար շուտա տուտուց մուտուց բանիր... Ձե, ախպեր, եղ ուսումնականները դիփ մետի թոկով կապելու գժիր ին:

(Գարեգիցը յեվ Արցակը ծիծաղում եմ) Հա՛, հա՛, հա՛... Ի՞նչ իք ծիծաղում, ձեր արիվը, դրուստ իմ ասում, դրանք ինչ եկան չեկան, միք քաղաքը խարար արին: Հե՛լ գիդի, շարթենը մե ջեր որթաճալի բաղերում համքրներով քեփ կոնելինք, իժում դուդուկը առաջնիրս գցած, թալգուլն ու վառած մոմերը ձեռքներիս քեփ անելեն գիշրվա կեսին գալիս ելինք տուն. ո՞վ եր հարցնում, ան ո՞վ գարեղվա կոներ՝ ուվարես խուսք ասի... համա ինչ լուս նընդան եղ սուտի քրիստոսները, եղ անարխիստներն ու պրապապանդիստները, միք քեփն ել, միք ուրախութիսն ել դիփ մետի մոշա ելավ... միք դրախտի բարերար քաղաքը դժուկքից ուվարես դարձրին, ամեն որ բոմբ ե, ինչ գահրումար ե, գցում ին ու խալխին պանտի հանգը գլղիզլոր անում:

(Արցակ յեվ Գարեգիցը ծիծաղում եմ) Հա՛, հա՛, հա՛... ել մարդ չի կանացի տնեմեն դուս գա... աստոծ գիտենա, զըզվեցրիլ ին, զզվեցրիլ...

ԱՐՇԱԿ.—Ձեզ զզվեցնողները, պարոն Գիգոյի, ժողովրդի տականքներն են:

ԳԻԳՈՂԻ.—Տականքները կի չե, դիպե եղ ուսումնականներն ին:

ԳԱՐԵԳԻՆ.—Այո, ուսումնականներն են, վոր ժողովրդի համար ավելի շատ են մտածում:

ԳԻԳՈՂԻ.—(Հեզգետեց) Վունց վուր ձեր դոխտուրն եր մտածում: Փարմասոն վարդապետի հանգը մող ե անում իր կուշտը ել սապոժնիկ, ել փալանդուզ, ել փոնչի, ել քիսաչի... Թավաթ գժեր ին, ուփրո գժվեցնում ու գցում ե խալխի ջանին: Նրա տունը դոխտուրի տուն կի չեր, դառել եր Հավլաբրի մեղանը՝ ինչ թավուր թոկից փախած մլթոնի ասես, վուր չի մտնում...

ԱՐՇԱԿ.—Բժշկի տան դռները բոլոր հիվանդների համար պետք ե վոր միշտ բաց լինեն, իսկ թե դուք դրանով ինչ եք ուզում ասած լինել, դա արդեն հասկանալի չե... բայց պետք ե ասեմ, վոր ձեր կարծիքը սխալ ե...

ԳԻԳՈՂԻ.—Վահանը մաշ սոցիալ չե:

ԱՐՇԱԿ.—Իհարկե չե:

ԳԻԳՈՂԻ.—Բա ի՞նչ ե, թե վուր սոցիալ չե:

ԱՐՇԱԿ.—Նա անկուսակցական ե:

ԳԻԳՈՂԻ.—Անկուսակցականս վճարն ե, առջի դամս իմ լսում. կուլի եղ ել նուր պարտիա չե. ախպեր, ես մուշուրեկ տեղում են-դադա խալխ չկա, ինչդադա պարտիա կա. սոցիալիստ, հնչակիստ, շանտաժիստ, ֆեդերալիստ, անարխիստ: Անիծածների անունն ել վուր տալիս ինք, վալ թու մե բաշ սատանի հանգը դուրս գան ու ցցվին աղաքդ, դե հանե ու նրանց փուղ թավազա արա:

ԳԱՐԵԳԻՆ.—Անկուսակցականները եղպես բաներ չեն անում:

ԳԻԳՈՂԻ.—Բաս դրանք հարուստների կուշտը կարմիր փեշատով նամակ չեն դրկում: Նրանցմեն փճուղ չին ուզում...

ԳԱՐԵԳԻՆ.—Ամենևին:

ԳԻԳՈՂԻ.—Այ քեզ լավ բան: Մ ուլափ. հարցնիլն ամթ չըլի, անկուսակցական շատերը կան, թե մենակ ձիւր դոխտուրն ե:

ԱՐՇԱԿ.—Ժողովրդի մեծամասնութունը անկուսակցական են լինում, ինչպես, որինակ, տերտերները, տիրացուները, սարկավազները, դերասանները, սուղիանները, պրիստաֆները, գարադավուները, ժանդարմները... ու եսպես շատերը:

ԳԻԳՈՂԻ.— Թե քու մամի հոգին կու սիրիս, եղ ինչ գորբա պարտիա լե. բաս գլուխս մեռնի, թե վուր խլապոտ չանիմ ու վաղն հեթ չլեն գրվեմ:

ԳԱՐԵԳԻՆ.— Դուք արդեն գրված եք:

ԳԻԳՈՂԻ.— Ո՛վ, թս...

ԳԱՐԵԳԻՆ.— Դուք, ձեր կինը, ձեր լերեխեքը:

ԳԻԳՈՂԻ.— Վահ, վունց թե. իս վուր պարտիում գրված ըլիմ, ու իս չիմ գիտենամ: Ան թե չե, եղ պարտիեն ինչ խիստ եմ հավնի, վուր կնգաս ու երեխանցս ել եմ գրել տվի... Ձե, ախպեր, դուն լանդիլէ կուլիս, մեր մեջ եղ թավուր բան չկա:

ԱՐՇԱԿ.— Յեղ վոչ ել եղ տեսակ պարտիա կա, վոր գրվես, հա, հա, հա...

ԳԻԳՈՂԻ.— Մա՛ջ:

ԳԱՐԵԳԻՆ.— Անկուսակցական նշանակում ե վոչ մի կուսակցութեան չպատկանել...

ԳԻԳՈՂԻ.— Ետենց ասա ե... Կինաղամ լեղիս պատուից...

## Տ Ե Ս Ի Լ 16.

ՆՈՒՅՆՔ, ՍԻՄՈՆ, ՇԱՔՐՈ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐ.

ԲՈՂՈՐԸ.— Ո՛ւր ե բժիշկը... Ո՛ւր ե նա, մենք նրա հետ գործ ունենք:

ԳԻԳՈՂԻ.— Վահ, թնչ իք բղավում. դռները մեր իք կոտորտում, դաչաղներ հո չեք: Բժիշկի մոտ գուրձ ունեք, գնացեք նրա տունը, թնչ մոտ ինչ իք գալի...

ՇԱՔՐՈ.— Նրա տունը մենք գնացինք, նրանք մեզ ասացին, վոր բժիշկը ուզում ե մեզ տեսնել, իսկ մեզ տեսնելու համար նա ալստեղ պիտի գար:

ԲՈՂՈՐԸ.— Յեթե լեկել ե, թող դուրս գա, մենք նրա հետ գործ ունենք... (աղմուկ):

ԳԻԳՈՂԻ.— Գիտ են ես մուսուկները. իժում թնչ իք բղավում, բղավել չըլնի, թե չե հետտի կու բղավիմ, վուր ձե նա Հաշտարխան կգնա... Եստեղ, ասում իմ, թե խելք ունիք, մուսջ կացեք, թե չե ես նմուտիս գարադով կուկանչիմ, ձիգ բռնել կուտամ. զարաստով չիկ-բուստով չիկ... Դուք ինձմեն վախեցեք հա:

ԲՈՂՈՐԸ.—Մենք վոչվոքից չենք վախենում...

ԳԻԳՈՂԻ.—Մաթրախի շրփշրփոցը թե կու լսիք, կու վախենաք:

ՇԱՔՐՈ.—Ձենդ տաք տեղից ե դուրս գալիս: Դու վոր կերել կշտացել ես, մեզ ել հարցրու ե:

ԲՈՂՈՐԸ.—Յերկու որ ե մենք հաց չենք կերել:

ԳԻԳՈՂԻ.—Փռնուամը քիչ հաց կա. գնացեք կերեք. ձիզ մի ե դադադա անում...

ԲՈՂՈՐԸ.—Փռնի տեղը մենք ել գիտենք, փող վոր չունենք, ԳԻԳՈՂԻ.—Վուր աշխատիք, կունենանք:

ՍԻՄՈՆ.—Մենք աշխատում ելինք, փող ել ունեկինք, բայց բժշկի պես անխիղճ ու անաստված մարդը լեկավ մեզ խաբեց ու մեզ տեղիցը զրկեց...

ԲՈՂՈՐԸ.—Նրա պատճառով հարցուրավոր մարդիկ գործարանից զրկվեցին. (աղմուկ):

ԳԻԳՈՂԻ.—(Արուակից) Այի թե սոցիալ չե. դե արի ջուղարը տու:

ՍԻՄՈՆ.—Բժիշկը չըլնեք, մենք գործադուլ չեկինք անի, ե Գևորգ Բաղդասիրը չեք սպանվի...

ԱՐՇԱԿ.—Սուտ ես ասում, սրիկա, խառնակիչ. գործադուլի պատճառը մենք ելինք, և լեթե այսոր դուք պարտվում եք, և ձեր գործադուլը անհանդուրժյան ե հանդիպում, մեղավորը համենայն դեպս բժիշկը չե... Յեվ բավական չե, վոր դուք բանվորության միտքը պղտորելու ստոր մատնիչ և խառնակիչ դիւնեք կատարում, այլ ուրիշի դժբախտության պատճառ ել եք ուզում դառնալ... չես քո կյանքիդ վերջ կտամ, մատնիչ, սրիկա... (Գառույցը հանած ուզում ե հարձակվել Սիմոնի վրա, Գարեգիցը բռնում ե) ասա, ինչու համար ես սրանց հավաքել. ինչու համար ես սրանց զրգուում բժշկի դեմ. ի՞նչ ես ուզում դու նրանից. ի՞նչ ե արել նա քեզ... Մատնիչ. Հուղամ...

ՇԱՔՐՈ.— Ի՞նչ եք սրան լսում, սա դուրս արվածներից ա, գնանք բժշկին գտնենք...

ԲՈՂՈՐԸ.—Գնանք, գնանք... (աղմուկով գնում եք):

ԳԻԳՈՂԻ.—Ես դավադարումը մե բաշ գարադավոյ տուն չգամ... (գնում ե):

ԳԱՐԵԳԻՆ.—Գնանք բժշկին գտնենք և զգուշացնենք, կույր ամբոխը զրգուված ե նրա դեմ... (Գնում եք):

ՍԻՄՈՆ, ՇԱԲՐՈ, ՎԱՀԱՆ ՅԵՎ ԱՄԲՈՅԸ.

**ԲՈՂՈՐԸ.**—Մենք հաց ենք ուզում, մենք ապրել ենք ուզում...

**ՎԱՀԱՆ.**—Դուք ապրել եք ուզում, դուք գոյութիան կոխել եք մղձակ, բայց ուր ե, ինչո՞ւ չի լսվում անարդարութիան դեմ բողոքող ձեր հուժկու ձայնը... ինչո՞ւ չեմ տեսնում դարերով կաշկանդված կապանքները ձեր ջլուտ բազուկներով ջախջախելիս...

**ՍԻՄՈՆ.**—Ձեր ուզում լսել, մենք քարոզներ շատ լսեցինք, և եղ քարոզները մեր տունը քանդեց, եղ քարոզներով եք ուզում դուք նորից մեզ կերակրել, մենք չենք ուզում. եղ մեծ մեծ հույսեր խոստացող քարոզները դուք ձեզ համար պահեք. նա հաց չի տալիս, մենք քաղցած ենք, մենք հաց ենք ուզում...

**ԲՈՂՈՐԸ.**—Մենք քաղցած ենք, մենք հաց ենք ուզում... Մենք սովից մեռնում ենք, մենք տանջվում ենք:

**ՎԱՀԱՆ.**—Միթե լես չեմ տեսնում ձեր տանջանքը, ձեր տառապանքը... Ա՛հ, կյանքս կտալի, լեթե կարողանալի ձեր վիճակի դառնութիունը գեթ մազաչափ թեթևացնել...

**ՍԻՄՈՆ.**—Ձեր ուզում լսել:

**ԲՈՂՈՐԸ.**—Ձեր ուզում լսել, չենք ուզում լսել...

**ՎԱՀԱՆ.**—Ինչո՞ւ ձեր գիտակցութիւնը այդ աստիճան մթադնված, խեղաթուրված պիտի լինի, վոր դուք ձեր բարեկամն ու թշնամին դանազանել չկարողանաք... և դուք այստր փոխանակ ձեզ տանջող ու սարկացնող որկնքների դեմ կովելու՝ ձեր միտքն ու հոգին թունավորող լեքուլթիների դեմ զինվելու... ձեր հարվածը դուք ձեզ եք դարձնում...

**ՍԻՄՈՆ.**—Ձեր ուզում լսել...

**ԲՈՂՈՐԸ.**—Ձեր ուզում լսել... չենք ուզում լսել...

**ՎԱՀԱՆ.**—Լսեցեք ինձ, ընկերներ:

**ՍԻՄՈՆ.**—Լո՛ր, դու մեր ընկերը չես. դու մեր թշնամին ես...

**ՎԱՀԱՆ.**—Սուտ ես ասում, լես ձեր թշնամին չեմ, ձեր թըշնամուն դուք գնացեք ուրիշ տեղ փնտո՞ք...

ՄիՄՈՆ.—Մենք նրան փնտռել և գտել ենք... Մահ նրան...  
(Ուզում ե հարձակվել վահագնի վրա յեվ ցրան զառույցով սպա-  
ցել, այդ միջոցին ցեսս են մտնում Գրիգոր, Յ. Բալկ, Գարեգին  
յեվ Ա. Բրահամ):

## Տ Ե Ս Ի Լ 18.

ՆՈՒՅՆՔ, ԳՐԻԳՈՐ, ԱՐՇԱԿ, ԳԱՐԵԳԻՆ ՅԵՎ ԱՅՐԱՀԱՄ.

ԳՐԻԳՈՐ.—Թողեք տեսնեմ, այդ ռևն ե մահ սպառնում:  
(Ամենքը մի կողմ են բազում, Սիմոնը զառույցը ձեռքին  
կանգնած լուռ ճայում ե): Կույրեր, ինչու չեք ուզում հանգը-  
նել այն ջահը, վոր մեզ, միայն մեզ ե լուսավորում...

ՄիՄՈՆ.—Եդ լուսատու ջահը, չեթե ձեզ լուսավորում ա,  
մի ուրիշի կյանքը թող նա չխավարացնի...

ՇԱՔՐՈ.—Մի աղջկա պատճառով նա Գևորգ Բաղդանիչին  
սպանել ա և եսքան խալխին հացից ու գործից զրկել... Մենք  
նրանից վրեժ ենք ուզում...

ԲՈՂՈՐԸ.—Վրեժ, վրեժ...

ԳՐԻԳՈՐ.—Վրեժ, բայց վոչ անմեղներից .. Գևորգ Բաղ-  
դանիչի սպանողը, նրա կյանքը խավարեցնողը ահա կանգնած ե  
ձեր առջև. լուծեցեք նրանից ձեր վրեժը... (ամենքը զարմացած  
իբար յեեսս են ճայում): Այո, նրան չես սպանեցի, նրա կյանքը  
չես խավարացրի, վորովհետև նա ինքն եր ուզում ձեր կյանքը  
խավարացնել, նա ինքն եր ուզում ձեզ սպանել, ձեզ բոլորիդ  
կենդանի կենդանի թաղել, և ահա ձեզ ազատելու, ձեր կյանքը  
վրկելու համար չես ուզեցի միայն այդ անել...

(Զղջման իրարանցում ամբոխի մեջ):

ԱՐՇԱԿ.—Այժմ հասկանում եք ձեր արածը...

ԳԱՐԵԳԻՆ.—Զգում եք, թե վորքան մեղավոր եք...

ՎԱՀԱՆ.—Վոչ, նրանք մեղավոր չեն, դուք ել մեղավոր չեք...  
Ձեր մեղքը, ձեր վոճիքը ձեր տգիտութիան արդյունքն ե, իսկ  
տգիտութիունը ձեր գլխավոր ու միակ դժբախտութիունը...

ՄիՄՈՆ.—(Դառույցը զեն ե ցայրում, գլուխը խոնարհած  
ու լուռ կանգնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր











ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038907

[254]

A <sup>II</sup>  
38907



4-11-1 1-11-1